

ՔԱՐԱԼՆԵՆՑ Օ.

# ԵՐԿՈՒ ԶՐՈՅՑ



891.99

Բ-17

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵԼԷՔՏՐԱԶԱՆԻ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ե. ԱՂԱՆՆԱՆԻ. ՊՈԼԻԳՐԵՍՍԿԱՅ 7.

1907

(38)

492  
4538

891.99

Р-17

492

583

БИБЛИОТЕКА

6306

13 APR 2011

БИБЛИОТЕКА

КОГДА КНИГА ВЗЯТА

492  
57  
111

**БЕРЕГИТЕ КНИГУ!**

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в срок, чтобы и другие могли воспользоваться ею.

Handwritten notes in blue ink, including the number 4538 and other illegible characters.

Handwritten numbers and text: 891.99, Բ-17, and 147.

583  
ՀԱՄԱՂԵԱՆՑ Ը.

6306

13 APR 2011

# ԵՐԿՈՒ ԶՐՈՅՑ

Handwritten number 457

ԵՐԵՔ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ  
ԵՐԵՔ ՈՍԿՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ОНА СЛУ

В  
С  
М

Централ (այս անունը չափ) Լենին  
գծ. Բան  
1907 թ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
ԵՐԵՔՐԱԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՈԼԻԹԵՏՎԱՅԱ 7.  
1907 (38)

4445



3389  
40

### ԵՐԵՎ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

**Մ**ի բարձրալսողական աշխարհում ձիւն ձմեռ էր, լեռ ու դաշտ ճերմակ հագած: Բուքը—ձնաթիփին օռնալով, վզզալով աջ ու ձախ փչում էր:

Բքի օռնոցը քանի գնաց խստացաւ ու վերջը կարծես շղթաներից արձակուած դե, կատաղած, փրփրած ընկաւ դաշտերը, ձորերը և շնչաւորների վրայ սարսուռ տարածեց. Բքադեր ոլորապտոյտ հոսան անելով խառնափշտորեց մթնոլորտը ձնաթերթեփով, սառցէ մղեղով: Տներ, ծառեր, ապառաժներ, ամենն էլ աներևութացել էին ճերմակ զանգուածի մէջ. երկինք-գետինք միանման դգեստաւորուած դարձել էին մի անաւոր շփոթ, մի ալեծածան ծով...

Այսպէս եղանակին դարձեալ հագար երանի բնակութեան մէջ մնացածներին: Իսկ դրսում ասուն թէ անասուն զարհուրելի տեսարանից մոլորուած չէին իմանում, ո՛ր փախչեն, ո՛ր գլուխները թագցնեն:

Օգի բուռոցն ու հարնդոցը անդեօք երաժշտու-

թեաննման էր, թէ դժոխային փողի, միայն այսքան պարզ էր, որ բուքի հետ ընկերացած անխնայ ամեն ինչի գլխին, մէջքին բամփելով շարտում էր ձնի թերթեփի թեթևութեամբ, բաշից դէպի ձոր, ձորից դէպի ծործոր, հալածում, խեղդամահ անում:

Այս անեղասաստ ժամին երեք ճամբորդ բուքի թափով տափարակի զանազան կողմերից խռկուած, գնալիք ուղղութիւնները կորցրած եկել էին պատահմամբ իրար դէմ առել: Յուսահատ սրտով, խուփ աչքերով օգնութիւն էին գոռում, իրար կաշում, բայց մի ըոպէ անկարող լինելով տեղները կանգուն մնալ, նորից անձնատուր էին լինում բքի սկող հոսանքին ու օդում վեր վեր թռչելով շարժում մէկ առաջ, մէկ ետ, մէկ աջ, մէկ ձախ առանց դար ու փոս նկատելու: Շատ էլ նրանց ունեց պոռնկը, աչք ունքը թերթեփից սառսռում էին, ճարներն ինչ, պաշտպանուելու հնար չունէին: Նրանց միակ ջանքն ու տանջանքն այն էր, որ իրար թև ու զգեստ ամուր բռնած պահեն. եթէ ձիւնաթաղ լինելու են, գոնէ իրար մօտ շունչները փչեն: Նէնց որ մղեղոտ մթնոլորտը վայրկենապէս պարզում էր ու ներքև թխին տուող առարկայ էր նկատում, իսկոյն առջևից վազող ճամբորդը ուղղում էր այն կողմը: Բայց երկու քայլ չփոխած մէկ էլ տեսար, ձնի հոսանք շրջեց նրան միւս կողմի վրայ ու շշկացրեց:

Շունչները բերաններն եկած այսպէս երկար քաշ էին գալիս նրանք խոր ձների մէջ: Արդէն վերջի եկողը յոգնել էր ու բեռ դարձել միւսների համար: Շփոթութիւնն աւելացել էր, չգիտէին՝ դրան թողնեն, իրանց գլուխը մի կերպ պըրծացնեն՝ թէ իրանք էլ նրա հետ ձնախեղդ լինեն:

Նէնց այս օրհասական վայրկենին երկինքը նրանց կարեկցեց: Առջևից գնացող ճամբորդը աչքը բաց արեց, տեսաւ մի գետնափորի դէմ եղած.

— Ահ, վերջապէս նզովեալ բուքից կազատուենք, բացականչեց նա ու վերջին ուժը ժողովելով ընկերներին քաշ տուեց. — պատսպարուելու տեղ է, շտապով մտնենք:

Գետնափորի սրահը վիշապի նման գլուխը ցցել էր, իսկ ամբողջ մարմինը գետնի տակ մեկնել: Մուտքը գետնի մակերևոյթից ցած էր ու խոր ընկած: Երևի հանդի անասնանոց էր: Էլ դուրսը կանգնելու հնար չկար, որ մտածէին, թէ կարելի՞ է այս գետնափորը մտնել: Չնի տարափը աջ ու ձախից անողորմ ծեծում էր: Դժողքի դուռը բացուէր, ներս կը մտնէին, ինչ թէ դաշտում պարապ մնացած գոմ: Իրար քոնչելով շտապ շտապ թափուեցին ներքև:

Միակ լուսամտան այդ մուտքն էր. նեղլիկ դուռը պոկուած էր, չկար: Մի քանի վայրկեան

շմուած կանգնելուց ետ դէմքներից ձնի մղեղը թափ տուին ու սարսափահար նայեցին, արեկոծ մթնոլորտին, որտեղից ձնի փաթիլները ուժով թափուում էին ներս ու երեսներին ծեփում:

Առաջին յոգնած ճամբորդը շուրջը նայելով ողբաձայն խօսեց.

— Եթէ իմանամ այս գետնափորում գազաններ կան ու ինձ լափելու են, այստեղից հեռացողը չեմ, մինչև օդը չըխաղաղուի:

Երկրորդն աւելի նուաղած խօսեց.

— Թող գազանների տեղ աւազակներ լինեն, պարտական լինեմ թէ ծոցիս ոսկիների հետ հագուստս էլ չըտամ, միայն թէ ինձ այն փրփրած բուքի ճանկը չպցեն: Ամա՛ն, զարհուրը պատել է ջանս, էլ ինձանում ուժի կտոր չկայ:

Այս ասելով գրեթէ շնչասպառ մեկնուեց գետնի վրայ:

Երրորդը թէև նոյնպէս գունատ, յոգնած էր կրած տանջանքից, բայց աւելի զգոյշ բնավորութեան տէր լինելով հետաքրքրուեց իմանալ թէ ինչ որջ են ընկել: Ներսը խիստ մութն էր, մուտքից երկու քայլ հեռու ոչինչ չէր երեւում: Աջ ու ձախ ձեռները ման ածելով շարժուեց. ոտների ծայրերով շոշափելով պատահեց մի քանի ծուռ մուռ սիւների. չափելով իմացաւ, որ գետնափորը տաս քայլ լայնութիւն ունի. իսկ թէ երկարութիւնը ճրքան է, այդ մնաց անյայտ, որովհետև վախեցաւ մինչև ետևի պատը գնայ:

Դառնալով միւսների մօտ խորհրդաւոր ձայնով ասեց.

— Ինչ պատուհաս էլ այս խաւար գետնափորի միջից գալու լինի, պէտքէ համբերենք, ուրիշ ճար չկայ: Մեզ բուքից ազատող Աստուածը այս մութից էլ կազատի:

Ճամբորդները նեղ մուտքից լուռ դիտում էին տարերքի անեղ խաղը: Ամեն մի հորնդիւն նոր զարհուր էր ազդում նրանց: Այդ դրութեան մէջ չիմացան թէ ճրքան մնացին, յանկարծ դրսում աւելի խիստ արեկոծութիւն սկսուեց. օդը թնդաց, մռնչաց. ասես թէ գետինը սասանեց: Դղրդիւններից ճամբորդները զարգանդուեց լով սրտաթափ եղան ու տեղն ու տեղը թաւալվոր ընկան: Էլ չիմացան աշխարհում ի՞նչ է պատահում: Նուաղած վիճակում երկար կը մնային, եթէ մի ուժգին հարուած գետնափորի ծածկը չօրօրէր: Այդ վայրկեանին մի մեծատարափ ձնի հոսան շարտուեց ցեքի կողմը ու ծեփ կապելով ամուր բռնեց անասնանոցի մուտքը: Այդ հարուածի վրայ սթափուեցին ճամբորդներն ու աչքերը բացին խաւար տարածութեան մէջ: Անասելի երկիւղ պատեց նրանց սրտերը: Սկսան բարձրաձայն հառաչել, օգնութիւն կանչել, ան ու դողով մթնում իրար փնտռել, իրարով փարուել. Այս գոռում գոչումի միջոցին ճամբորդներից խոհեմը զարձաւ միւսներին ասեց.

— Եթէ այս որջի ծայրում գազան կամ ա-

ւագակ լինի քնած, չէ որ մեր աղաղակներից կըզարթի: Աւելի լաւ է լռենք, տեսնենք ի՞նչ է լինում:

Այս նկատողութեան վրայ միւսներն էլ լռելով ականջ դրին թէ դրսից ինչ ձայն է գալիս:

Այս սպասողական դրութեան մէջ իրանք էլ չիմացան, քանի ժամ մնացին, սո՞վն ու ծարաւը կարծես կսկրծից մոռացած լինէին: Իրանց մը-խիթարելու համար Ասածուն էին մեղադրում, թէ ինչո՞ւ այսպիսի պատուհասի բերեց: Մանաւանդ երկուսը՝ իրանց անմեղ հրեշտակ ձեռքներով շարունակ դժգոհում էին Արարչի դէմ: Բայց վերջը տեսնելով, որ դրանից շահ չկայ, ուզեցին զրոյց անել: Փորձեր արին, սակայն նկատեցին, որ խօսքն իրար չի բռնում, սկսած նախադասութիւնը բերաններում շաղուում է:

— Եկէք գետինը փորենք, մի կերպ դուրս գանք, ասեց մէկը:

— Ի՞նչ ես ասում, դուրս գանք, բուքի բերան ընկնենք, ընդհատեց նրան երկրորդը:

— Ծաղած ձեռներով կընստենք այստեղ, աւելի վատ. գետնափորի փթած գերանները չեն կարող ծանր շալակը տանել, ծածկը վէր կընստի ու մեզ ողջ ողջ կըթաղի, ասեց առաջինը:

— Աշխատելուց, փորելուց չեմ փախչում, խօսեց երկրորդը, թէկուզ մասներով լինի, բայց դրա համար չէ որ ուժ է հարկաւոր: Բերանս չորացել է, ոչ խմելու ունենք, ոչ ուտելու:

Երեքով քիչ մտամոլոր մնալուց ետ առաջին ճամբորդը լուռութիւնը խզեց:

— Ա՛խ, իմ ընդարձակ վարելահողեր, ո՞ւր են ձեր լցրած շտեմարանները, սրանից էլ նեղ վիճակ չի լինիլ, օգնութիւն հասէք է: Զգիտեմ ինչո՞ւ ողջ գաւառը չիմարացել, ինձ բաղտաւորագոյն մարդն էր համարում, երբ որ վերջն այս միջնում ճիճուի պէս սովամահ էի լինելու:

— Ա՛խ, դառնագին գոչեց երկրորդը, դու վարելահողդ ու հացահատիկդ ես լաց լինում, հապա ես գլուխս ո՞ր քարին տամ, որ սնդուկները ոսկով, արծաթով լցրել եմ, չուսալով նրանցով աշխարհիս ամեն երջանկութիւն վայելել: Երեկ թէ մէկէլ օրը իմ գանձերով ողջ գաւառի նախանձի առարկան էի, այժմ ցամաք հացի կարօտ տառապում եմ այստեղ: Հազար երանի իմ դռան ծառաներին:

— Երկուսդ էլ արդար էք խօսում, ասեց երրորդ ճամբորդը, բայց մոռանում էք, որ փողն ու հողը ամեն բանի տեղը չեն բռնում: Նիւթականին շատ էք նշանակութիւն տալիս, բարեկամներ: Զուր տեղը չենք փորձանքի մէջ ընկել, կարելի է մեզանից մէկն ու մէկը սոսկալի մեղքի տէր է ու նախախնամութիւնն ուզում է խրատել: Երեք անձանօթ մարդ այս մութ տեղը իրար կուշտ ենք ընկել. եկէք, անկեղծ ասենք մեր գործած մեղքն ու վարձքը, տեսնենք արժանի՞ ենք ողորմութեան: Փողն ու հողը փորձով

տեսաք, որ այսպիսի հանգամանքում անզոր բարեկամներ են, փնտռենք ուրիշ զօրեղ բարեկամ:

— Ի՞նչ զօրեղ բարեկամ, զարմանքով հարցրին միևս երկուսը:

— Եկէք մեր սրտի թագուն ծախրը բաց անենք, տեսնենք բարութիւն, առաքինութիւն կը գտնենք: Մեր արարքները լիշենք, հէնց իմանանք մենակ ենք ու աղօթք ենք անում:

— Աղօթել ես ասում, խօսեց առաջին ճամբորդը, օրական ես երկու անգամ աղօթում եմ: Ինչ վերաբերում է ծածուկ մեղքերին, առանց դրան մարդ կը լինի: Ծանր մեղքերը թող մնան գերեզմանի համար. նա միայն կարող է նրանց պարտակել և գաղտնի պահել մարդկանց տեսութիւնից:

— Ոչ, համաձայն չեմ, առարկեց երկրորդը, քեզ պէս ես էլ եմ աղօթել ու ծունր դրել, բայց այդ բոլորը մարդկանց ու Աստծուն խաբելու համար: Շատ արդար պահանջ է, արի, ինչ որ գէշ բաներ ենք արել, ասենք, սրտներս մաքրենք, սրանից էլ խոր գերեզման չի լինիլ:

— Իհարկէ, ասեց երրորդ ճամբորդը, կարելի է հէնց ես ծանր մեղք եմ գործել ու առանց զղջումի մնացել. ինչո՞ւ մենակ ես չը պատժուեմ: Ուզում էք, խոստովանութեան գործը դիւրացնելու համար առաջ ես սկսեմ: Եթէ համաձայն էք, ասեմ:

— Համաձայն ենք, սկսիր:

Երրորդ ճամբորդն սկսեց իւր պատմութիւնն այսպէս. «Հայրս գիւղացի մարդ էր. աղջիկ զաւակներին պահելու և պսակելու պատճառով պարտքի մէջ էր. ընկել: Վերջին զաւակն ես էի, հազիւ էր կարողանում ինձ ու մօրս պահել: Ինձ շատ էր սիրում հայրս, աւելի նրա ծոցին եմ մեծացել քան թէ մօրս: Ուր գնում էր, միշտ հետը տանում էր, փոքրուց պահանջում էր, որ ես ազնիւ, հաւատարիմ մարդ դուրս գամ: Նրա խրատներից մէկն այս էր. «հարուստ ու խելօք լինելը ցանկալի բան է, բայց ազնիւ լինելը ոչ թէ ցանկալի, այլ և պարտաւորական է ամենի համար»:

Տասներկու տարեկան կլինէի, երբ մեր գիւղը մի անձանի քաղաքացի եկաւ և մեր տանն իջաւ: Հայրս հարուստ չէր, բայց խելքով մեր գիւղի մէջ յայտնի էր: Հացի ժամանակ հիւրին ծառայողը ես էի. նա տեսնելով իմ ուշակալութիւնը, խօսք ու պատասխանի մէջ ունեցած շնորքս, ափսոսաց, որ մինչև այդ օրը գիւղումս եմ մնացել և կարդալու մէջ առաջ չեմ գնացել: Հայրս իրան արդարացրեց այսպէս.

— Իրա համար առաջինը՝ միջոց է հարկաւոր, երկրորդը մինուճար զաւակալինելով չեմ ուզեցել տնից հեռացնել: Աւելի լաւ է նա գիւղում մնայ համեստ վիճակով, առաքինի սրտով, քան թէ քաղաքում փողի տէր դառնալով գոռոզանայ, ծնողն էլ մոռանայ, ծննդատեղն էլ:

Մեր հիւրն իսկոն հօրս չառարկեց, այլ շարունակեց ինձ խօսեցնելով զբաղուել: Ծնորհալի պատասխաններն վրայ նրա սիրտը ամուր կպաւ ինձ, վերջը դարձաւ հօրս ասեց.

— Բարեկամ, այս երեխէն ինձ շատ է դուր եկել, չուզես էլ, ուժով տանելու եմ, իմ տանը կըթեմ և Աստուծով մարդ շինեմ:

Այս խօսքերի վրայ մօրս փառասիրութիւնը վառուեց: որպէս զի ուրիշ մայրերի պէս պարծենայ, թէ քաղաքում որդի ունի, ստիպելով համոզեց հօրս, որ չհակառակուի, թոյլ տայ քաղաք գնամ:

Եւ գնացի: Այդ պատուական մարդը ինձ տուեց մի ոքմինի, որ կարդալ ու հաշուել սովորեցնի, յետոյ ընդունեց ինձ իւր մեծ գործի մէջ: Ես ուտում խմում էի այդ մարդու տանը, իսկ ուճիկս ուղարկում էի հօրս: Տէրս այնքան գոհ էր իմ աչքաբացութեամբ, որ սիրտս շահելու համար տօներին ընծաներ էր տալիս: Ծնողական տունը սրտիս այնքան մօտիկ ու անմոռաց էր, որ ստացած ընծաներս էլ այնտեղ էի ուղարկում: Տարիներ անցնելով ես այնպէս դիրք ձեռ բերի գործի մէջ, որ ամենն էլ ինձ էին նայում ու ինձանից ակնածում:

Մի օր տէրս անակնկալ հրաւիրեց իւր մօտ և ասեց.

— Այ որդի, մինչև այսօր ծառայողներն մէջ չեմ ունեցել մէկը, որ քու չափ յաջողակ ու հա-

ւատարիմ եղած լինէր գործի մէջ. բացի այդ այնքան խոնարհ ու անձնուէր որդի լինէր ծնողների համար, որքան դու ես. ես նպատակով եմ բերել քեզ քաղաք. առաքինի վարքդ ու գովանի յատկութիւններդ ինձ պարտաւորում են, որ քեզ արժանապէս վարձատրեմ: Ի՞նչ վարձ ես ուզում ինձնից, ասա:

Այդ հարցի վրայ մնացի շուարած: Ի՞նչ ասէի, որ նրա մտադրութեան համապատասխան լինէր: Իմ մէջ մտածում էի. չլինի թէ ինձ փորձում է, ինչո՞ւ անհամեստ պահանջներ անեմ: Մնացի լուռ, գլուխս քաշ գցած: Նա շարունակեց.

— Եթէ Աստուած ինձ դուստր տուած լինէր. քեզ փեսայ կըշինէի, բայց որովհետև այդ չի տուել, ուզում եմ քեզ ժառանգ դարձնել: Համաձայն ե՞ս, թէ չէ:

Այս լսելով անխօս վրայ թռայ, նրա ձեռը համբուրեցի և ասի. — հազար փառք Աստուծոն, որ քեզ պէս բարեսիրտ տիրոջ հանդիպեցրեց. միայն չընեղանաս, այդ մասին պէտք է հօրս հետ խօսեմ:

— Վնաս չունի, խօսիր, ասեց նա:

Ապսպրեցի, հալրս եկաւ, յայտնեցի, նա խիստ ուրախացաւ: Տէրս նրա ներկայութեամբ ասեց.

— Ի՛նչ որդի, այժմ մի հարսնացու ընտրիր, ում որ ուզում ես, միայն խնդրում եմ, որ աղքատի տանից չոկես, փողի չըման գաս, այլ պարկեշտութեան:

Ինչպէս նրա խորհուրդն էր, այնպէս էլ

վարուեցի. հարսանիքին ծնողներս ներկայ էին: Իրանից ետ հազիւ մի տարի էր անցել, տէրս խնդրեց, որ գործերի կառավարութիւնը յանձն առնեմ: Ծեր էր, հանգստանալ էր ուզում: Այդ բանը իմ դիրքն աւելի բարձրացրեց քաղաքացոց աչքում: Հռչակս մեծացաւ, դարձայ ամենի խօսակցութեան ու նախանձի առարկան. բայց ես ներքուստ մնացի նոյն համեստ որդին հօրս համար:

Ջբաղմունքներս բարդուելով չկարողացայ առաջուայ պէս հայրենի գիւղ գնալ, ծնողներին այցելել: Հայրս մէկ մէկ գալիս էր. վերջը դարեց ծերութիւնը պատճառ բռնելով: Ապրուստի միջոցներ անթերի ուղարկում էի. բայց զարմանում էի թէ ինչո՞ւ ամիսներով նրանից նամակ չի գալիս: Մտածում էի, գուցէ տկարացել է. որոշեց, յատուկ ոքմին ուղարկեմ, որ աչքով տեսնի ու լուր բերի: Մակահն գործերիս շատութեան պատճառով այդ մտահան արի ու դրատեղ անա ինչ պատահեց: Մօրիցս անակնկալ նամակ ստացայ, որ հայրս գժուար հիւանդ է, հասնեմ, մահից առաջ ուզում է ինձ խօսք ասել: Մանուկի պէս շփոթուեցի. բոլոր գործերս թողի երեսի վրայ ու շտապեցի քաղաքից դուրս, որ հօրս վերջին շնչին վրայ հասնեմ, այն հօր, որի խրատներն ու դաստիարակութեան շնորհով այդպէս բաղդի ու հռչակի էի հասել: Մազի չափ նշանակութիւն չէի տալիս, որ քաղաքի մեծա-

մեծներից մէկն եմ ու ոտով եմ գնում: Վերջը տեսայ ծառան ձի է բերում: Նստայ ու արագ քշելով հասայ գիւղը: Հայրս իմ գալուստն իմանալով աչքը բաց արեց ու նուազած ձայնով խօսեց.

— Բարի ես եկել, որդի. վաղուց է քեզ կարօտ էի: Ձէ որ դու նոր հայր ու մայր ես ճարել, որոնք քեզ անհուն ժառանգութիւն են թողել, իսկ ես աղքատ մարդ էի:

Այս խօսքերը շամփրի պէս սիրտս դաղեցին: Սիրելի հօրս բերանից այսպիսի յանդիմանական ակնարկներ լսելը անսպասելի էր. ուստի վշտահար ու մորմոքուած հարցրի.

— Հայր, ինչից եզրակացրիր, որ քաղաքում երևելի դառնալը կամ մեծ ժառանգութիւն ստանալն ինձ քեզանից ցրտացրել են. ընդհակառակ ես նոյնն եմ մնացել, ինչ որ 12 տարեկան ժամանակս էի, երբ այս տանը բու թևի տակ ապրում էի: Մինչև օրս քու ոչ մի պատուէրը չեմ թողել, այժմ եթէ սրտումդ փափագ ունես, աս, հայր, քու կամքն ինձ համար սուրբ է, ինչքան էլ դժուար լինի, կատարողն եմ:

Ինչքան էլ մեծ զոհողութիւն պահանջէր, ես հրաժարուողը չէի, բայց նրա ուշադրութիւնը նիւթականի վրայ չէր դարձրած, նա ուզում էր իմ սիրտը փորձել, որ տեսնի թէ ես նախկին խոնարհ գաւաճկն եմ, թէ իմ դիրքով ամբարտաւան եմ դարձել:

— Շնորհակալ եմ, սրղի, քու քաշած խնամք-  
ների համար: Տեսնում ես արդէն գերեզմանի  
ափին մօտեցել եմ: շատի հետ արի մի թեթև  
փափագս էլ կատարիր, օրհնութիւնս տամ ու...

էլ չթողի խօսքը վերջանայ, հարցրի շտա-  
պով.

— Ի՞նչ փափագ է, հայր, ասա լսում եմ:

Նա ձեռը դրեց սրաին և խօսեց.

— Այստեղ մի բան կայ, այրուում է. դրա  
ձեռից հովութիւն չունեմ: Եթէ առաջուայ խո-  
նարհ գաւակս ես, վերցրու ջրամանը. վազիր  
աղբրից ցուրտ ջուր բեր: Ինչ որ քաղաք ես  
զնացել, համով ջուր չեմ խմել:

Նա կարծել էր, թէ ես իբրև ընտանիքի  
տէր և քաղաքի մէջ նշանաւոր դիրք ունեցող  
կրկիրաւորուեմ այդ առաջարկից, հասարակ ծա-  
ռայի տեղ ջրի չեմ վազիլ: Ընդհակառակ, նա  
փոքրիկ ջրամանը ցոյց տուեց, ես մեծ կուճը  
շալակեցի ու առանց մի բոպէ ուշանալու վա-  
զեցի դէպի աղբրի կողմը: Կտրներին, փողոցնե-  
րում ժողովուած մարդիկ, որ քիչ առաջ իմ  
փառքին նախանձում էին, այժմ ծիծաղում էին  
խելառի պէս վազելուս վրայ: Ուշ չդարձրի, հա-  
սայ աղբիւր, ուր անթիւ հարս ու աղջիկ ինձ-  
նից առաջ գնացել, կանգնած իրանց հերթին էին  
սպասում: Շատ էլ հարուստ էի, իրաւունք չու-  
նէի ուրիշի հերթը խլել: Որոշումս էր կուժն իմ  
ձեռով լցնել և իսկոյն դառնալ: Անտանելի կրս-

կիծը սրտումս սպասեցի մինչև հերթն ինձ ե-  
կաւ: Շտապով լցրի կուժը ու շալակելով բազ-  
մութեան միջով հասայ տուն: Վայ տարաբաղ-  
դիս: Հայրս աչքերը փակել էր, գուցէ յաւի-  
տեան: Կուժը վերցնելով ուզում էի գոչեմ. — հայր,  
անա փափագդ կատարել եմ, վեր կաց:

Պառաւ մայրս իրաւունք չտուեց:

— Ի՞նչ ես անում, սրղի, երեք օր է հայրդ  
աչք չի խփել, մի զարթեցնիլ, ոտդ բարի էր,  
թող հանգստանայ:

Հնազանդուեցի մօրս ու բերածս ջրից  
փարչը լցրի ու ձեռիս բռնած կանգնեցի հօրս  
գլխավերև, որ աչք բանայ թէ չէ, իրան տամ:  
Տևեց կէս ժամ, տևեց մի ժամ, հիւանդը ոչ մի  
շարժում չէր անում. ոչ մի շունչ չէր քաշում:

— Մեռած է հայրս, գոչեցի հեկեկալով ու  
ջրի փարչը ձեռիս մահճի մօտ ծունկ չօքեցի:

Գիշերը մենակ մնացած միջոցիս սկսայ  
աղօթել:

— Սրարիչ Աստուած, հօրս սիրտը կասկած  
է ընկել, թէ ես փառքով, յաջողութիւնով հպար-  
տացել եմ ու իրան մոռացել, բայց դու, սրտա-  
գէտ Աստուած, լաւ ես իմանում թէ ինչ ջերմ  
ու անկեղծ սէր եմ զգում դէպի ծնողներս: Տա-  
րակոյսը հօրս սիրտը խանձում է: Աղաչում եմ,  
տէր, կենդանացրու գոնէ մի քանի բոպէ, տեսնի  
վերջին իղձը կատարուած:



Մինչև լոյս անքուն աչքով մահճի մօտ առանց ջրամանը ձեռից թողնելու: Մէկ էլ տեսայ լուսադէմին հայրս զարթեց ու աչքն ինձ ուղղելով հարցրեց քաղցրութեամբ.

—Որդի, ջուրը բեր՞ր:

—Այո, հայր, ասի ու ջրամանը մեկնեցի: Նա ախորժակով խմեց ու ցնծուն աչքերով գոչեց.

—Ուխայ, սիրտս հովացաւ. գօրանան, իմ քաղցր որդի: Ամեն կարօտ առայ, ձեռդ մեկնիր, օրհնեմ:

Պատուէրը կատարեցի: Հայրս երջանիկ դէմքով խօսեց.

—Անչափ գոհ եմ Աստծուց, որ անթիւ գայթակղութիւնների մէջ քեզ նորն խոնարհն ու անարատն է պահել: Ծնողական սրտի համար զաւակի խոնարհութիւնից էլ քաղցր բան չկայ: Չար հարեանները կասկած էին ցանել սրտիս մէջ, որ դու հարուստ տէր գտնելով ինձ իսպառ մոռացել ես: Այդ վիշտն ինձ զցեց մահիճ: Բայց այժմեան ծնողասէր արարքդ ապացուցեց, որ ես սխալ եմ: Թող պապանձուեն չար լեզուները: Օրհնուես դու, քու սիրտն էլ իմի պէս ճշխայ քու զաւակների խոնարհութիւնով: Ապրես երկար ու երջանիկ, բուժմդ հող բռնես, ոսկի դառնայ նեղ օրի չհանդիպես, հանդիպես էլ կարճատև լինի:

Այս օրհնանքից ետ հայրս հանգիստ աչքե-

րը փակեց ու ճրագի պէս հանգաւ: Ապսպրեցի, կինս ու զաւակներս քաղաքից եկան, հանդէսով թաղել տուի հօրս, նրա յիշատակի համար աղքատ գիւղացոց շատ փող ու բարիք բաժանեցի: Ընտանիքս առ ժամանակ մօրս մօտ թողնելով դառնում էի ձիով քաղաք, ուր անթիւ կարևոր գործեր ինձ են սպասում, ճանապարհին այս փորձանքը պատահեց:

Երբորդ ճամբորդն այս չափ պատմելուց ետ աչքերն ուղղեց գետնափորի առաստաղին ու կանչեց.

—Բարձրեալ Աստուած, թէ ամօթալի գործ ունեմ արած, որ սրանցից ծածկում եմ, ինձ մենակ պատժիր, այս անմեղները թող գնան իրանց գործին. իսկ եթէ պատմածս ճիշտ ու ճշմարիտ է, թող գթոտ աչքդ լուսաւորի մեզ այս խաւարում ու մխիթարի:

Այս ասեց, չասեց, յանկարծ գետնափորի վրայով շարժ անցկացաւ ու մուտքի վերևում բազկաչափ լոյս երևաց:

—Օրհնեալ է Աստուած, բացականչեց պատմողը ու գետնի լուսաւորուած կտորը համբուրեց:

—Այժմ ես եմ ուզում պատմել, ասեց երկրորդ ճամբորդը: Մի դէպք անջինջ դրոշմ է գրել սրտիս վրայ. մինչև օրս ոչ ովի չեմ ասել: Աստծուց թագուն չի, ինչո՞ւ ձեզնից թագուն

մնայ: Երեխայ օրից ինչ որ աչքս բաց եմ արել, հօրս տեսել եմ փողատէր: Ոչ թէ գիւղի, այլ ողջ գաւառի ամենահարուստն էր: Նեուու տեղերից գալիս էին մեր տուն շահով փող տանելու: Հարիւրաւոր ծառայ ու մշակ էր բանացնում հայրս ու ամենի հետ հաշիւն իւր ձեռով վերջացնում: Փողի փակն ու բալանին նրա մօտ էր:

Ամառնավերջին մշակները մեր դաշտերում աշխատանքները վերջացրել, եկել էին, որ հաշիւ ստանան: Ամենին իրանց հասանելիքը տուեց հայրս, հերթն եկաւ մի պատանու, որ զարմանալի եռանդով չափահասների հաւասար վաստակել էր: Վերջն իմացայ, որ դա որբ տղայ էր, փոքր քոյրեր ունէր, հօր մահից ետ ողջ ընտանիքի հոգսը դրա վզին էր մնացած: Հայրս դրանց աւալով ասեց.

— Դու տարիքով փոքր ես, ի՞նչ կասեն չափահաս մշակները եթէ քեզ էլ նրանց հաւասար վարձատրեմ. ուստի տալիս եմ քեզ ամբողջ ամառուայ վարձիցը տաս արծաթ պակաս:

— Այ մեծատուն, խօսեց պատանին, քու ի՞նչ հաշիւն է, թէ ես տարիքով փոքր եմ, ոչ մի մշակից պակաս չեմ աշխատել, ինձ էլ նոյնքան կրհասնի: Իմ ընտանիքն աւելի կարիք ունի, ինչո՞ւ ես անարգար տեղը վարձս կտրոււմ: Անկեղծ ասած, հայրս խիստ ժլատ, փողատէր մարդ էր, նրա նպատակն էր տաս արծաթը մը-

շակից կտրել, իւր քսակում պահել, սուտ անչափահաս լինելն էր պատրուակ բռնում: Խիստ նեղացաւ, որ մի պատանի համարձակոււմ է իրան առարկել. աչքերը վրէժն խոժոռելով հայնոյեց և օձիքից բռնելով մշակների միջից վռնդեց.

— Գնա, կորիւր իմ դռնից, ասածս ասած է, մի սև փող աւելի տուողը չեմ:

Պատանին հայնոյանքն անպատասխան թողեց, առանց ընդիմանալու հեռացաւ, մեր բակի ծայրին կանգնեց ու բարձրաձայն հետեւալն ասեց.

— Լսիր, փողատէր. ես իմ լուսահոգի հօրիցրս լսել եմ, որ արգար քրտնքի ոչ մի կաթիլը գուր չի կորչում: Եթէ քեզ պէս մեծատան համար աշխատել եմ աւելի, քան թէ դու վճարում ես այսօր, յոյս ունեմ, որ մի օր Աստուած իմ փոխարէն քեզանից կը պահանջի:

Այսպէս դառնացած հեռացաւ պատանին մեր տանից:

Դրանից ետ տարիներ եկան ու անցան. մեր օջաղը աւելի ու աւելի շէնացաւ, լցուեց: Հօրս անհուն գանձի ծայրը շատ հեռու էր գնացել: Միայն երկիրնքն իւր բանը լաւ գիտէ: Դաշտում մշակների վրայ հսկելիս հայրս մրսել էր, ինչ է, տընքսնքալէ հասաւ տուն և անկողին ընկաւ: Հասակ առած մարդ էր, չկարաց յաղթել տկարութեան, երկար ամիսներ մնաց մահճի գերի:

Ինչքան էլ դեղ ու բժիշկ բերել տուինք, օգնութիւն չեղաւ: Հայրս օր օրի վրայ դառաւ հոգեվարժ ու չարչարուեց: Ինչ որ հին ու նոր հաշիւներ ունէր, մաքրեց, որ հոգին հանգստանայ: Տալուն տուեց, առնելուն առաւ, բայց ցաւի ու յեռի ձեռից հանգստութիւն չգտաւ: Անտանելի էին նրա քաշած տանջանքները, զիշեր ցերեկ մի ձայնի մահ էր կանչում, հոգեառը չէր գալիս: Այցելողներն ասում էին՝ մահը խռովել է: Հայրըս լսում էր այդ, զգում էր որ ճշմարիտ են ասում, բայց չզիտէր ինչ անի, որ մահն իւր հետ հաշտուի: Սկսեց մտածել, մանկութիւնից դէս արած սխալները միտ բերել ու բացարձակ ասել: Յիշողութիւնը երկար փորփրելուց ետ յանկարծ բացականչեց.

— Ա՛հ, հիմի յիշեցի, թէ ինչո՞ւ մահն ինձնից երես է թեքել, երկար խրչնագացնել է տալիս: Մեղա՛յ, բեզ տէր Աստուած: | Տանեցիքս վեր թռանք տեղներից: Նա ձեռը մեկնեց, գլխատակից փողի բսակը հանեց.

— Այ որդի, ձայն տուեց ինձ, մօտ եկ, լսիր: Նոր եմ հասկանում, որ Աստուծու առաջ մեզքը միևնոյն է, քորոցի չափ լինի թէ սարի: Բաւական ժամանակ առաջ ազահութիւն արի, մի պատանի մշակից տաս արծաթ կարեցի: Արածս անարդար էր, խեղճ որբին զրկեցի, նա արտասուելով իմ տանից հեռացաւ: Ահա քեզ եմ տալիս, ստացիր նրա արդար քրանքի վարձը

և տար իրան առը: Բայց անյապաղ տուր, որ հոգիս այսուհետև նրան պարտական չմնայ:

Ապա աչքերն երկինք գցելով գոչեց.

— Աստուած, այժմ ներիր բազմամեղիս ու արձակիր կապանքից: Այս ասելով խոր շունչ առաւ հայրս և հոգին հանգիստ աւանդեց: Թագել տուի մեծ փառքով, և իբրև միակ ժառանգ անցայ օջաղի կառավարութեան գլուխը:

Մինչ այդ օրը ձեռիս ոչ փող էի ունեցած և ոչ հաշիւ պահած, հօրս արարքների դէմ տըրտընջում էի, ժլատութեան մասին հօ բոլորովին գաղափար չունէի: Բայց հէնց որ անհուն գանձի իրաւունքը ձեռս ընկաւ, ուրիշ տեսակ դառայ: Հօրս վայելած յարգանքները, նրա հպարտ դիրքը ամենի նախանձը վառում էին, չէ՞ որ այդ փողի ու ոսկու շնորհքն էին: Օր օրի վրայ նկատեցի, որ փառասիրութեան ծարաւը իմ մօտ էլ թունդ է: Եթէ ուզում էի շարունակ պատիւ ու խոնարհ երկրպագութիւն ստանալ, պարտական էի եղած գանձն անկորուստ պահել: Փողասիրութեան պոչից ես աւելի ամուր բռնեցի քան թէ հայրս էր: Այդ երևաց նրանից, որ սգի եօթ օրերն անցկացան, բայց հօրս անդարձը այսինքը կտակը անկատար, մշակին յանձնելիք փողը դեռ գրքպանումս: Ինքս ինձ ասում էի.— այսօր չեղաւ, վաղը կուղարկեմ, դեռ ժամանակ կայ:

Վաղն էլ լուսանալիս ազահութիւնը սիրտս պատում էր ու պարտքիս կատարելը խափանում: — Մշակը մոռացած կլինի, ասում էր ներսիցս մի ձայն, ինչո՞ւ փողը զուր դէն գցես, թող ծոցդ ֆնայ:

Եւ ֆնայ:

Ինչքան որ կարողութիւնս ու գանձս աւելանում էր, այնքան քունս ու սրտիս անդորրութիւնը նուազում էր: Քնած միջոցիս վեր էի թռչում ու վատ դառնում, որովհետեւ տեսնում էի, հորս պատկերն եկաւ մի վայրկեան առաջ կանգնեց ու վշտացած հեռացաւ: Սյդ առաջին անգամն էր, երկրորդ անգամ երևալիս ասեց. — Ինչո՞ւ ես ծուլանում, որդի, ու հոգուս պարտքը անվճար թողնում:

Հորս նախատինքից ամաչելով մտադրուեցի, հէնց որ զարթնեմ, իսկոյն ուղարկեմ կամ ինքս տանեմ տամ: Բայց ամեն անգամ կամ ծուլութիւնս էր չաղթում կամ ազահութիւնս: Հայրս էլ իւր կողմից հանգիստ չէր տալիս ինձ, երազումս տանջում էր իւր վշտահար նայուածքով ու յանդիմանութիւններով: Այսպէս տեցին շաբաթներ, ամիսներ, վերջապէս ամաչելով հորս ուրուականից վճռեցի չաղթել ազահութեանս: Մի առաւօտ քնատեղից վեր կացայ, առայ տասն արծաթը, որ տանեմ աղքատ մշակին տամ և ներողութիւն խնդրեմ ուշացնելուս համար: Ասի ու արի: Ճանապարհ ընկայ ու գնում էի մենակ

դաշտի միջով: Ահա հարևան գիւղից դէմս գալիս է մի ծանօթ մարդ.

— Քու մօտ էի գալիս, աղան, ի՞նչ լաւ էր, որ այստեղ պատահեցիր, ասեց նա:

— Ի՞նչ կար, ի՞նչ էիր ուզում, հարցրի նրան:

— Տեղս շատ նեղ է, աղա, մի 10 արծաթի կարիք ունեմ: Ճարահատած տանում եմ կթի կովս ծախելու կամ գրաւ դնելու, որ պակասութիւնս հոգամ:

— Յարմար ժամանակ չպատահեցիր, ծոցիս 10 արծաթ փող ունեմ, բայց իմը չէ, մշակավարձ է, տանում եմ իրան տամ:

— Իմ կովն ու հորթը քու ծոցի փողից աւելի արժեն, բայց դրութիւնս այնպէս նեղ է, որ ակամայ այդքանին էլ յօժար եմ: Մօտիդ 10 արծաթը հաւիր ինձ տուր ու այս կովն ու հորթը տար, քեզ լինի:

Ազահութիւնը սրտիս մէջ կրկին գլուխը բարձրացրեց ու ներքևից կրծքիս տախտակին բռնեց.

— Այսօր մշակին մոռացիր, ուրիշ անգամ կը վճարես հորդ պարտքը, այսպէս ձեռնտու, շահաւէտ առուտուր ամեն անգամ չի պատահի:

Չկարողացայ գիւղացու խնդիրը մերժել, քանի ուզում էի ձամբէս շարունակել, նա փէշիցս բռնում էր ու ձեռը բկին դնելով պաղատում, որ փողն իրան տամ, կովը վերցնեմ: Ակամայ

տուրի: Նա զնաց իւր բանին, ես մնացի կանգնած: Յանկարծ հօրս ուրուականը աչքիս առաջ տնկուեց ու սաստեց.

—Անուշակալ որդի, դարձեալ ուզում ես հոգուս պարտքն ուշացնել. ի՞նչ ես կանգնել, ինչո՞ւ աչք անասունները մշակի տունն չես տանում. չէ՞ որ նրա փողի հետ փոխեցիր:

Այդ սաստից զարհուրած ճնշեցի սրախ մէջ ազահութեանս ձայնը, բռունցքով կրծքիս խփելով ասի. «լուր, չարամիտ փորձիչ»: Անասունները քշեցի այն ճամբով, որ զնում էր դէպի մշակի գիւղը: Սակայն անգուսպ կիրքը ներքեւից դուաց.

—Անխելք մարդ, եթէ այդպէս անհաշիւ առատաձեռն վարուես, իւրաքանչիւր գիւղացու 10 արծաթի փոխարէն մի հորթամէր կով տաս, մի տարի չըբոլորած դու կաղբատանաս, մաղին հակը կըդառնաս: Մշակն ի՞նչ է իմանում, թէ նրա փողով ապրանք ես առել: Օգուտըդ իմացիր, անասունները տար քո տուն:

Անկուշտ ազամորդի էի, կրկին չաղթուեցի ազահութիւնից ու կովի, հորթի բերանը թեքելով դէպ իմ տուն, խառնեցի տաւարիս: Դրանից ետ մոռացայ մշակն էլ, մշակավարձն էլ: Նինք տարի անցկացաւ թէ վեց, երկու գլուխ ապրանքը դառաւ ութ գլուխ, նրանց կաթից տկերով իւր ու պանիր շինեցի, իմոնցի հետ ծախելով շահուեցի: Հօրս ուրուականը տեսնելով, որ ինձ

ուղիղ ճամբի բերելը դժուար է, դադար տուեց ինձ այցելելը, խոովեց ինձանից: Ես այնուհետև բոլոր եռանդս գործ դրի ոսկիս ու ստացուածքս շատացնելու վրայ, որ անունս հեռու գաւառներում տարածուի:

Մեր գաւառի կէսը պարտապաններս էին. դրանից էլ մեծ փառք փողատիրոջ համար: Մի օր փափուկ դոշակի վրայ նստած՝ նրանց մէկ մէկ ընդունում էի ու հաշիւ տեսնում. մէկի մուրհակը փոխել տալիս, տոկոսը գլխի հետ միացնում, երկրորդից տոկոսն առնում, գլուխը թողնում: Յանկարծ գլուխս բարձրացրի ու տեսայ առաջս մի երիտասարդ կանգնած: Պարտապաններիցս ոչ միսին նման չէր: Ինձ խոր մախի ահելով բարձր ձայնով ասեց.

—Բարի լոյս, մեծատուն:

—Աստծու բարին, պատասխանեցի ու ոտին, գլխին բարակ նայելուց ետ հարցրի.

—Այ եղբայր, ո՞վ ես, չեմ ճանաչում, ի՞նչ ես ուզում:

—Ես մշակ մարդ եմ. քեզ ասելու խօսք ունեմ, իրաւունք կըտամ սրանց մօտ ասեմ:

Նրա սառն երեսից հոգիս գուշակեց, որ շահաւէտ բան չի ասելու, ունքով նշան արի, որ ներկայ բոլոր մարդիկ հեռանան: Երբ երկսով էինք, ասի նրան.

—Անձանօթ եղբայր, ասելիքդ ի՞նչ է, ի՞նչ կարիք ունես, պատմիր, լսեմ:

—Մեծատուն զուր ես ինձ անծանօթ ա-  
նուանում, այս օջաղըն ինձ ծանօթ է. բաւա-  
կան տարի առաջ ամիսներով այստեղ բանել եմ  
ու վարձիս մի մասը անստանալ թողել: Այժմ  
ձմեռնամուտ է, ապրուստի դժուար միջոցը.  
տանս գլխաւորն ես եմ, բոլոր քոյրերիս ճամ-  
բու եմ դրել, ամենափոքրն է մնացել. հին ու  
նոր մշակավարձերս ժողովելով հասալ ձեր գիւ-  
ղի կուշար, միտս ընկաւ, որ ձեր օջաղից էլ առ-  
նելիք ունեմ: Հօրդ մահը վաղուց ինձ յայտնի է.  
սպասում էի վարձիս մնացորդին, բերող չեղաւ:  
Եկել եմ իմանամ՝ արդեօք հայրդ շունչը փչելիս  
իմ վարձի մասին կարգադրութիւն չարեց: Ստա-  
նալիքս ընդամենը 10 արծաթ էր. ձեռս պակաս  
չլինէր, ոտ չէի ձեծիլ գալ: Խնդրեմ ասա, եթէ  
հայրդ մեռնելուց առաջ բոլորի հաշիւը վերջաց-  
րել է, մենակ ինձ չքաւորիս է մտահան արել,  
վնաս չունի. թող մնայ անվճար: 10 արծաթի  
փոխարէն 100 լինէր, նրա ետնից այն կեանքը  
վազողը չեմ. իմ տեղ Աստուած լինի նրա պար-  
տաւէրը: Իսկ եթէ հողին փչելիս իմ վարձը ան-  
գարձի—կտակի մէջ չիշել է, խնդրում եմ քեզ  
իբրև նրա ժառանգի իմ քրտնքի գինը տաս:

—Շատ արդար է պահանջդ, ասի նրան,  
վարձիդ մնացորդն իմ մօտ է: Հայրս մեռնելուց  
առաջ մտաբերել է ու ինձ յատկապէս պատուի-  
րել, որ քեզ հասցնեմ: Մեղաւորը ես եմ, որ  
մինչև օրս ուշացրել եմ: Լաւ է որ ինքդ ես ե-

կել, ուրախութեամբ կրվճարեմ: Բայց ճամբայ  
եկած մարդ ես, յոգնած կլինես, հանգստացիր,  
մինչև պարտապաններիս հետ հաշիւս վերջաց-  
նեմ:

Մշակն ինձնից այսպէս քաղցր վարմունք  
չէր սպասում: Հանգիստ քաշուեց մի կողմ: Իսկ  
իմ նպատակն ուրիշ էր. ուզում էի ժամանակ  
շահեմ սրտիս մէջ վառուած նոր կռիւը հանգց-  
նեմ: Այդ իսկոյն չէր լինում, ուստի պարտա-  
պաններից ետ խնդրեցի մշակին այսպէս. —ար-  
դէն մութն է, էլ չես կարող ձեր գիւղը գառ-  
նալ, սպասիր, իրիկունս միասին հաց կուտենք,  
հօրս յիշատակը մի բաժակով կօրհնես, վարձդ  
կըտամ, կերթաս:

Մշակը խոնարհ գլուխ վէր բերեց ու սպա-  
սեց: Սրտիս կռիւը թեժացել էր. ազահութիւնը  
զոռում էր, չէր թողում խղճիս ձայնին լսեմ. ա-  
սում էր. —վարձից մնացած 10 արծաթը տուր  
ու ճամբու գցիր, ապրանքին ձեռ մի տալ:

Ընթրիքի նստանք. գիտմամբ զրոյցը, կե-  
րուխումը երկարացրի, որ չարը սրտէս դուս  
գայ, այդ իրիկունս և եթ խղճիս ուղածը կատա-  
րեմ, վերջանայ: Փափագս գլուխ չեկաւ, ազա-  
հութիւնը զօրեղ էր խղճից, իմ մէջ նրան տրորե-  
լով ինձ էլ հետը տանջում էր: Ունքերս չէին  
բացւում, զրոյցը ձգձգելով մշակին որոշ բան  
չէի ասում: Հացը վերջանալու վրայ էր ու գրը-

պանիցս փող չէր դուրս գալիս: Մշակը համեստ կերպով դարձաւ, ասեց.

—Մեծատուն, առաւօտը վաղ ճամբայ եմ ընկնելու, թէ զաւակներիդ արևը կըսիրես, ետ չըզցես, ես հազար հոգս ունեմ:

Այդ ասելով նա սպասում էր, որ ձեռս տանեմ ծոցս կամ գրպանս: Իսկ ես ընդհակառակ անտարբերութեամբ պատասխանեցի.

—Շատը համբերել ես, քիչն էլ համբերիր, առաւօտը վարձդ կըստանաս ու կերթաս բանիդ:

Իմ խօսելու ձևից նա եզրակացրեց, թէ իրան փող տալու միտք չունեմ, պահանջը ձգտելով իբրև աղքատ մարդու խաղացնում եմ: Բայց Աստուած էլ գիտէ, որ իմ ցանկութիւնն ուրիշ էր: Ազահութիւնն ասում էր.

—Ի՞նչ ես տատանւում, 10 արծաթը տուր մշակին, ճամբու գցիր. ուտացրած հացդ էլ թող տոկոսի տեղ լինի:

Իրա դէմ խիղճս բողոքում էր ու ինձ յանդիմանում.

—Ազահ մարդ, եթէ հօրդ սնդարձը կատարելն ուզում ես, արդարութիւնով կատարիր: Ձէ որ կովն ու հորթը մշակի վարձով առար. մօտդ ուրիշ փող չունէիր: Երկու անասունը բազմացել, ութ գլուխ են դարձել ու քեզ այնքան արդիւնք տուել. ամենը մշակի սեպհականութիւնն է. նրան յանձնիր. ալլապէս դու յափրշտակիչ ես ու գող:

Ձգում էի, որ խղճի ասածը միանգամայն արդար էր, բայց ինչպէս կատարէի. ութ գլուխ անասնից յանկարծ զրկուելը իմ գծուծ սրտի համար հեշտ բան չէր, մանաւանդ որ չարը դարձար չէր տալիս, շարունակ ականջումս փսփրսում էր.

—Դու աշխարհիս ամենալիմարը կլինես, եթէ 10 արծաթի փոխարէն կէս նախիր տաւարը մշակին յանձնես, որը ոչ կով առնելուց տեղեկութիւն ունի և ոչ նրա ծնունդների բազմանալուց:

Խղճի ու ազահութեան պայքարի մէջ մնացել էի շուարած, չգիտէի ո՞րի կողմը թեքուեմ: Հաստատ գիտէի, որ հայրս այդ դիշեր ինձ երեւալու է, բայց էլի քաջութիւն չունէի մշակին պարգևու, թէ բանն ինչու՞ն է: Ծառային հրամայեցի, որ մշակին տանի հիւրասենեակը, պատրաստ անկողինը ցոյց տայ: Յոյս ունէի, որ գիշերը գոնէ մի որոշում կը կայացնեմ: Առանց հագուստս հանելու բարձին թինկ տուի ու սըրտիս ականջ էի դնում: Շփոթ ու կռիւ էր ներսս: Անչափ յոգնած էի գգում ինձ. լաւ համարեցի քնելը, բայց վախենում էի. աչքս թեթև փակելուն պէս վեր էի թռչում, չլինի թէ քնի աշխարհում հօրս ուրուականին հանդիպեմ: Մինչև լոյս բացուելը շամփրի պէս պտոյտ եկայ. առանց մի որոշման վրայ կանգ առնելու: Մէկ էլ յան-

կարծ լսեցի, դուռը թխկացնում են, աչքերս հաղադելով վերկացայ բաց արի, տեսայ, որ մշակն է փայտը ձեռին առաջս տնկուած: Խոնարհ գլուխ տալով խօսեց.

— Բարի լոյս, մեծատուն, ուշանալու էլ ժամանակ չունեմ. երէկ զուր տեղը կորցրի: Եթէ վարձիս մնացորդը տալու ես, տուր, եթէ չէ, ես ուժաբան չունեմ, քեզ լինի: Միայն մի բան եմ խնդրում, արի գնանք, հօրըդ գերեզմանն ինձ ցոյց տուր:

Մնացի սառած:— Ինչի՞դ է պէտք հօրս գերեզմանը, հարցրի նրան:

— Մի՞թէ չես գիտում ինչի, խօսեց նա հանգիստ, այսքան տարի նրա հոգին ինձ պարտական է, հաստատ գիտեմ, որ այն կեանքումը տանջուած է: Ուզում եմ գերեզմանի պռնկին կանգնել, մի բերան «հայր մեր» ասելով նրան պարտքից ազատել: Թող նա պրծնի իւր տանջանքից, ես էլ բաւական իմ արած ողորմութիւնով գնամ իմ ճամբէն:

Այս խօսքերը լսելիս փշաքաղուեցի, ի՞նչ պէս, այս չքաւոր մարդն ուզում է հօրս գերեզմանի մօտ գնալ ու իրան հասնելիք 10 արծաթ փողը իբրև ողորմութիւն բաշխել մի գանձատէրի, որ տարիներ առաջ նրան հայհոյել ու վարձից զրկել է, իսկ ինձ իւր որդուն անհուն ժառանգութիւն է թողել: Դրանից ետ ի՞նչ կասի հայրս ինձպէս ապերախտին:

Միրոս տակ ու գլուխ եղաւ. ամաչելուց քիչ էր մնում մագերս պոկոտեմ: Դրանից ետ էլ ի՞նչ չար կամ ազահութիւն կը մնար սրտուս. հալածուեցին, փախան: Խղճի հրամանի համաձայն, իսկոյն մշակի թևից ամուր բռնեցի ու ասի խեղդուելով.— ետնիցս արի: Անխօս տարաչ դէպի տաւարի գոմը: Մշակն առանց ընդդիմութեան դալիս էր, բայց ո՞վ գիտէ սրտում ի՞նչ կասկածներ տանելով: Համբերեց լուռ մինչև հասանք գոմի մէջ տեղը:

— Սպասիր այստեղ, ասի նրան: Կանգնեց: Ես մտայ նստած տաւարիս մէջ, ընտրեցի նըրանցից ութ գլուխ ու վերկացնելով քշեցի նրա առաջը:

— Բարեկամ, ասի նրան, Աստծու տակին խոստովանում եմ, այս ամենը քու ապրանքն է, տար քու տուն:

Մշակն այլայլուեց ու վշտացած ձայնով խօսեց.

— Մեծատուն, ասենք, քու հայրը քեզ անհուն գանձ է թողել, ինչո՞ւ իմ աղքատութիւնը ծաղրում ես: Ի՞նչ գործ ունեմ ես քու տաւարի մօտ. քեզանից վարձիս մնացորդն եմ ուզում, ինչո՞ւ ես խնդիրս տնագաբան շինում:

Տեսալ որ ինձ սխալ է հասկացել, սկսեցի աղաչել, որ հանգիստ լինի, չվիրաւորուի: Նա չէր ուզում ասածիս հաւատալ, վրդովուած ու-

գում էր գոմից հեռանալ. թևից բռնեցի ու մեղմ ասի.

—Լսիր, բացատրեմ, բանն ինչու՞ն է: Քեզ հասնելիք 10 արծաթը 5—6 տարի առաջ բերում էի քու տուն, ճամբին շահաւէտ առուտուր պատահեց, մի հորթամէր կով էին ծախում, քու փողով առայ տուն բերի, նրանից այսքանը առաջ են եկել:

Մշակի կասկածը մեծ էր, գլուխը շարժելով ինձ թողեց ու դէպի գուռը գնաց: Խիղճս ասեց, մի թողնիլ: Ես նրա փէշից բռնելով ասի.

—Ինչպէս տեսնում եմ, դու տոկոսի վրայ ես մտածում, պահանջդ արդար է, անշուշտ այսքան տարում ապրանքիցդ շատ կաթ, մածուց, իւղ, պանիր եմ ստացել ու իմ տանը ծախսել: Պարտական եմ այդ արդիւնքները վերադարձնել, արդարութիւնն այդպէս է պահանջում:

Այս խօսքերն ասելիս կարծես սրտիցս մի ծանրութիւն վերանում էր ու ալանջիս մէջ հօրս ձայնը հնչւում.—այդպէս, որդի, լաւ է ուշ քան երբէք, պարտքը տալով, մեղքը լալով, տուր, հողիս ազատիր:

Էլ չհամբերեցի, մտայ մառան, ուր իւղն ու պանիրը տկերով դարսած էին. խտտելով հանտեցի գուռս ու մշակին ասի.

—Ահա, այս էլ քու ապրանքի արդիւնքն է, վերցրու տար: Հօրս հողին վկայ է, որ այս քու արդար սեպհականութիւնն է:

Այս անգամ հաւատաց, նկատեց որ արևիս սրտովն եմ ասում: Մօտ եկաւ, երկսով պանրի, իւղի տկերը բարձեցինք անասունների վրայ. անչափ շնորհակալութիւն արեց ինձ ու հօրս լիաբերան օրհնելով՝ գնաց իւր տուն:

—Ընկերներ, խօսեց երկրորդ ճամբորդը, այդ օրն անց է կացել, բայց այդ օրուայ Աստուածը կայ: Նա վկայ է, որ դրանից դէսը ազահութեան չարը սրտիս ոչ ափն է տեսել, ոչ մէջը. թէ սուտ եմ ասում, թող Արարիչն ինձ դատի:

Այս ասելով աչքերը դէպի առաստաղը գցեց ու գոչեց.

—Երկնային Աստուած, եթէ պատմածիս մէջ սուտ ու փուշ բան կայ, դու ինձ մենակ խորտակես, այս անմեղ մարդկանց ազատես: Իսկ եթէ ասածս ճշմարիտ է, դու քու զօրեղ աջով այս լոյսն առատացնես:

Այս խօսքի վրայ կրկին շարժ եղաւ գետնափորի շրջակայքում ու լուսամուտը թզաչափ ներքև իջաւ, շողքը մեծացաւ:

Առաջին ճամբորդն անվստահ ու ամօթահար դարձաւ ընկերներին.

—Ձեր արդարութիւնն արդէն պարզ երևաց, այժմ ես պատմեմ իմ արած մեղքն ու վարձքը, լսեցէք, Ստեղծողից թագուն չի, ձեզանից ինչո՞ւ թագուն մնայ:—Ես ծննդով ազնուականի որդի

եմ. ողջ գիւղն իմ սեպհականութիւնն է ու նրա վրայ նստող ժողովուրդը—իմ հարկատուները: Աչքս բաց կալած օրից տեսել եմ մեր տունը ամեն վայելչութիւններով լի: Ամուրի ժամանակաբոլոր մայրերն երանի էին տալիս այն կնկան, որի դստրին կըհաւանեմ ու փեսայ կըդառնամ: Երբ պսակուեցի ու զաւակների տէր դառայ, էլ բաց բերան չկար, որ իմ ապրուստը չըգոփէր ու իմ անունին: առողջ, գեղեցիկ տեսքին չընախանձէր: Իմ տեղ ո՞վ էլ լինէր, այդքան բարիքների համար փառք կըտար Աստծուն ու երջանիկ կեանք կը վարէր իւր ընտանիքի, իւր բարեկամների շրջանում. բայց կըքի գերի մարդն ինչ երջանկութիւն պտի ունենայ: Աչքերս հան գիսա չունէին, միշտ կանանց ետնից էին չըուտում. նրանք երկու էին, որսերի թիւը հարիւր: Գաւառում հարս չըկար, որ ինձ դուր գար և իմ թակարդից ազատուէր: Կողակիցս վաղ, ուշ արածներս ամենն էլ իմանում էր, բայց ահից լըռում էր ու հլու աղախնու պէս համբերում: Վաղուց դադարել էի կնոջս քաղցր խօսք ասել կամ փաղաքշել: Աստուած չէի ճանաչում, վաղուց ծաղրելով մտքէս հանել էի: Ինձ նման ուժեղ, գեղեցիկ, ճարտար, հարուստ ազնուական ո՞վ կար մեր գաւառում: Այդ էր պատճառը, որ իմ գիւղի հասարակութեանը բանի տեղ չէի դընում. կարծում էի թէ նրանք հող ու մոխիր են առաջիս. որ կողմն ուզում էի, այն կողմն էի

գարձնում: Բայց գիտէք ինչ: Իմ անհուն գոռոզութիւնս վիրաւորողը իմ հարկատուներից մինն էր. այն էլ աղքատ մարդ: Դա ունէր մի շատ գեղեցիկ կին. եօթ տարի շարունակ աչքերով հետևում էի նրան. փող թէ խորամանկ միջոցներ գործ էի դնում նրա ուշադրութիւնը գրաւելու, նրան ուղիղ ճամբից հանելու համար. ամենն էլ ապարդիւն էին անցնում: Անաջողութիւնից հանգիստս կորցրած գազան էի կտրուել. ինքնասիրութիւնս ինձ ուտում էր, որ մտադրութիւնս չէր կատարւում. ամուսինը հասարակ ոքմին էր, բայց սրտոտ ինչպէս առիւծ, յայտնի էր նա թէ գիւղում և թէ գիւղից դուրս. ամենն էլ նրան յարգանքով էին բարևում, իսկ կինը անչափ սիրելուց գլխով պտոյտ էր գալիս: Նախանձոտ վատասիրտը միայն ես էի, որ նրան սրտումս մահ էի ցանկանում: Խոր համոզուած էի, որ քանի նա ողջ է, սիրուն կինը կըմնայ ինձ համար պաս ու երազ: Ծատ էլ գիտէի, որ այդքան դժուար էր նրան տիրանալը, բայց անսանձ սիրտս բորբոքում, պահանջում էր....:

Իմ բաղդից այդ միջոցներին մեր գաւառում խիստ երաշտ պատահեց ու տեղեց բաւական երկար: Արտ, անդաստան չորացան, հողագործ, անասնատէր ամենն էլ մնացին պակաս օրում: Պաշար ունեցողը մի մասն ինքը կերաւ, միւս մասը փոխ տուեց դրացուն, բարեկամին

եկող տարի վերստանալու յուսով, բայց երբ երկրորդ տարին էլ երաշտը շարունակուեց, ժողովուրդն ընկաւ սարսափի մէջ, սովի երկիրդն ամենին պաշարեց: Միջակ ու աղքատ դասակարգը ուտելիք չէր ձարում, անտանելի էր մանաւանդ մանր երեխաներ ունեցողները վիճակը: Այնպիսի ծանր օրեր հասան, որ գիւղում կարիքից ծնողը որդուն ուրանում էր:

Գեղեցիկ հարսի ընտանիքն էլ կարիքի մէջ էր, մեր տանից հեռու չէր, ես այդ գիտէի, անտեսած փողը մսխել էր, դարդակ ձեռով նստել: Մի երկու լծկան ունէր, խոտի պակասութեան պատճառով կիսագնի վաճառել էր: Այժմ նրա միակ հոգսն այն էր, ինչպէս անի, որ երկու երեխին ու կնկանը սովի ձեռից ազատի: Կարիքի ձեռից սրը մուրացկանութիւն էր անում, սրը գողութիւն, սրն էլ կտրներին կանգնում բազկատարած երկնքի դէմ գանգատում էր: Նա այդ բաներն անողը չէր, սովոր էր արդար քրտինքով վաստակ անել, բայց վաստակի դուռը փակուել էր: Ի՞նչ անէր իւր ջլապինդ կոներով, գնար ձամբայ կտրէր, մարդ կողոպտէր: Այդ կարող էր, բայց արդար վաստակ չէր նրա կարծիքով: Գնար հեռու աշխարհից ապրուստ բերէր, բայց կիսն ու երեխէքը սւմ յուսով թողնէր:

Այս բաներն իմանալով ես ժամէժամ սպասում էի, որ նա անպատճառ կըզայ իմ ամբարի

դուռը շահով ալիւր վերցնելու: Կարծիքս սխալ էր, նա չեկաւ:

Մի երկու օր ոչ դռներին երևաց, ոչ կտրներին, մէկ էլ լսեցի, որ տկարացել, անկողին է ընկել: Ծածուկ ոքմինի միջոցով տեղեկանում էի նրանց տան վիճակի հետ. ուղիղ է ամուսնու հիւանդութիւնը անհուն վիշտ էր պատճառել կնկան, բայց զարմանալի տոկունութեամբ ամեն զրկանքի դիմանում էր: Խիստ կսկիծ պատճառողը զաւակների քաղցն էր. մօտից մի ըոպէ չէին բաժանում. ուր շարժւում էր անձարը, փէշից բռնած ժանգ ու ժինի անելով հետևում էին: Մարդուց թէ բարեկամներից ստացած ընծաները, արդ ու զարդերը, ամենն էլ ծածուկ զբաւ էր դրել ու տան պակասութիւնը հոգացել:

Հեռու գիւղերից իմ դուռը ալիւրի էին գալիս. լի ամբարներին շնորհով դարձել էի ողջ գաւառի տէր. ով ալիւր կամ ցորեն էր վերցնում, դառնում էր իմ ճորտը. խօսքս աջ էլ էր ազդում, ձախ էլ: Երկար ամիսներ աչքս մնում էր, որ սիրուն հարսի կողմից մի ապսպրանք գայ ալիւր ուղելու, չէր լինում: Համոզուած էի, որ մարդը չի թողում: Ուղիղ է, նա ոչ մի անգամ իւր ատելութիւնը չէր ցոյց տուել ինձ, բայց անկարելի էր, որ չիմանար թէ ես իւր կնկայ վրայ աչք ունեմ:

Վերջապէս մի օր լուր բերին, որ երեխանց

լացը մարդու վրայ խիստ ազդել է, կանչել է կնկանն ու այս ասել.

—Ս, կնիկ, այս չբեր տարիքը յաւիտեան շարունակուելու չեն, երևի խոռոված երկինքը վաղ ուշ մարդկանց հետ կըհաշտուի: Երեխէքս սովից տառապում են մաշուում, իսկ գիւղի ազնուականի ամբարները լիք տրաքում են: Սրի գնա ուրիշների պէս դու էլ մի երկու կող ալիւր ուզիր, ինչ որ շահն է, կըտանք: Ուխտել էի կեանքումս նրանից բան չխնդրել, բայց այսօր ստիպուած եմ հպարտութիւնս փշրել զաւակներէս լացի պատճառով: Օտար գիւղացոց չի մերժում, մենք հօ նրա հարկատուն ենք: Գնա ուզի, բեր, ժամանակին շահով կըվերադարձնենք:

Էգսի օրը վաղ վաղ զբօսնում էի տանս առաջի պարտէզում, յանկարծ աչքովս ընկաւ սիրուն հարսի նման մէկը. գլխակախ, մի տոպրակ կռան տակ գալիս էր դէպ իմ ամբարի կողմը: Սիրաս ցնծութիւնից կըծքիս տակ խաղս եղաւ:

Շտապով պարտէզը թողի, ամբարի դուռը գնացի ու տեսայ ձիշտ ու հաստատ նա էր, սիրուն հարսն էր այնտեղ կանգնած: Նրան տիրանալու ցանկութիւնը բոցավառուեց ինձանում. լպիրշ խնդումից խելացնորի պէս էի. որովհետև տարիներով փախստական որսը իւր ոտով եկել էր որսկանի առաջ կանգնել: Գոռոզ շարժուածքով մօտեցայ: Նա ահակալած կխտարի պէս շուար աչքերը մէկ աջ էր դցում, մէկ ձախ: Ինձ

նայելիս առաջ սփարթնեց, ապա կարմրելով աչքերը քաշ գցեց ու դողդոջուն ձայնով խօսեց.

—Գիւղի տէր, Աստուած քու մէկը հազար անի, գլխատէրս հիւանդ է, երեխէքս քաղցից լալիս են, դու էլ տեսնում ես, թէ ինչ զուլում ժամանակ է, խնդրում եմ, երկու կող ալիւր տուր, տանենք կառավարուենք, Իւր շահով կըվերադարձնենք:

Առաջին անգամն էր, որ նրա ձայնը լսում էի. լսողութիւնս ու հոգիս փաղաքշեց. փոքր ինչ աւելի խօսեցնել ու նպատակով անսրտի պէս կատակ արի.—բան է, վայ թէ գլխատէրդ մահանայ, այն ժամանակ ո՞վ կըվճարի փոխտուած ալիւրս:

Իմ անողոք խօսքերը աննման գեղեցկուհուն փոթոթեցին, հազիւ վիշտը զսպելով պատասխանեց.

—Ես դեռ չեմ կարծում թէ առիւծ մարդս այդպէս շուտ մահանայ, բայց եթէ Աստուած կուզի մեղաւորիս այդպէս խիստ պատժել, դու միամիտ կայ, տուած ալիւրդ չի կորչի. հարեանների համար կար ու մանած կանեմ, քու ալիւրի գինը կը վճարեմ: Սյդ էլ չլինի, երկու զաւակիս ձեռը բռնած դռնէ դուռ մուր կանեմ ու քու պարտքի տակ չեմ մնալ:

Նա այս վշտոտ խօսքերն էր ասում, ես անտարբեր նրա վիճակին՝ բարեկազմ հասակն ու գեղեցկութիւնն էի դիտում: Հրաշագեղ դէմքը հոգսի ձեռից թառամել էր. ծանր թախիծը բազմել էր թուխ աչքունքի վրայ: Սյդ անձար

վիճակում նա դարձեալ հպարտ էր երևում աչքիս: Մտքումս ասի, «ինչ օգուտ կըբերի այս հանգամանքում գոռոզ մնալդ, երբ ճարահատած եկել ես իմ ոտը: Խնդիրդ ուզում ես կատարուած տեսնել, առանց ընդդիմութեան առաջարկս կատարիր:

Մօտեցայ թշուառին ու չար բազէի հայեացքով ասի.

—Հագարից մի անգամ եկել ես դուռս, խրնդիրդ մեծ բան չի, երկու կողի փոխարէն չորսը կուղարկեմ ձեր տուն, բայց դու էլ մի կողմ թող յամառութիւնդ, գլուխդ հետս մին արա:

Վերջին խօսքերէս վրայ հարսի աչքերն արտասուքով լցուեցին: Նա ոչ բողոքեց և ոչ գայրոյթի նշան ցոյց տուեց, այլ մի քայլ ետ քաշուելով, գոգնոցի ծալրով արտասուքը ցամաքեցնել աշխատեց ու հեկեկալով խօսեց.

—Հարուստ ազնուական, քու առաջ կանգնած է մի մայր, որի սիրտն ու հոգին կլանուած են սովալլուկ գաւակների հոգսով, նա հնարաւորութիւն և իրաւունք չունի քու առաջարկին պատասխանելու: Նա սովի երեսից ամեն ինչ վաճառել, ընտանիքի կարիքն է լրացրել, մնացել է նրա համար անարատ ու անվաճառ միայն պատիւը: Ինչ աչք ես կամենում որ վաճառեմ, բայց դա մենակ իմս դէ, այլ և իմ ամուսնուն: Առաջարկդ նրան կըյայտնեմ. գլխատէրս գիտէ, թող վարուէ այս հանգամանքում ինչպէս ինքը կուզէ:

Այնուհետև էլ չմնաց մօտս. թառանչ բաշելով գլուխ տուեց ու գնաց:

Ես մնացի տեղն ու տեղս յիմարացած կանգնած. կասես գլխիս եփած ջուր ածին: Նրա վերջին խօսքերը հրաշէկ նետերի պէս սկսան շանթել լերդ ու թոքս: Էլ չկարացի տեղս երկար մնալ. անսման հարսը կասես մի պարան վիզս գցած ետնից ձգում էր: Իեռ թաղամիջում մարդ չկար, վռագով գնացի նրա տան ետևը, նեղ լուսամուտի տակ կուչ եկայ, տեղս կողքանց էր, որմին չէր տեսել: Սկանջ դրի լուսամուտից, որ իմանամ թէ մարդուկին ի՞նչ են խօսում իրանց գիւղի տիրոջ մասին:

Տան դուռը բացուելուն պէս հիւանդը հարցեր տուեց.

—Հ՞ը, կնիկ, ասի՞ր ազնուականին, ալիւրը բերի՞ր, շահի համար առարկութիւն արեց:

Կինը թուլացած, ուժասպառ դէմ ընկաւ տան մէջտեղի սիւնին ու դէմքը ծածկելով պատասխանեց:

—Ս՛խ գլխատէր, երանի բան չըհարցնես: Ասում ես բերի՞ր: Ի՞նչպէս բերեմ, շատ էլ երկուսի տեղ չորս կող է տալիս: Այնպէս պայման է առաջարկում, որ աւելի շուտ սովամահ կըլինեմ, բան թէ յանձը կառնեմ:

Հիւանդ ամուսինը տեսնելով կնոջ խիստ հեկեկալը, աղաչական ձայնով խօսեց.

—Հանդարտուիր, հոգիս, երևի սովի սարսափը այդպէս մարդկանց սիրտը փափկացնելու տեղ քարացրել է: Ինչ արած, համբերելու ենք, քանի որ գիւղում ուրիշ յուսատեղ չկայ: Շահը մէկին չորս կըտամ, միայն թէ անմեղ մանուկներէս լացը չըլսեմ: Ձուր չես նրա պայմանին համաձայնել ու ալիւրը տուն բերել:

—Ա՛խ, միամիտ հոգի, մորմոքուելով ընդհատեց կինը, եթէ հասկանայիր նրա տմարդի պայմանը, երբէք չէիր յօժարի. այդ գնով ալիւր ստանալ:

Այս ասելով հեծկլթաց ու կծկուելով սիւնի տակ վեր ընկաւ. Հիւանդի մէջ շիջած կասկածը նորից յարութիւն առաւ, դժուարութեամբ անկողնում նստեց ու շեշտակի նայելով կնկանը հարցրեց.

—Ի՞նչ անողորմ պայման է առաջարկում, պարզ ասա, լսեմ: Կինն առանց յապաղելու պատասխանեց.

—Դու չե՞ս իմանում միթէ, որ այդ անկարեկիցը վաղուց ետնիցս պտտում է: Մինչև օրս մի մաս քեզնից վախենալով, մի մաս երկնքից պատկասելով չի համարձակուել դէմ առ դէմ ինձ բան ասել: Այժմ երբ դու հիւանդ պարկած ես ու ես անձար վիճակում մանուկների քաղցի պատճառով նրա դուռն եմ գնում, նա կանդնում է ու երեսիս ասում. «Ուզածդ ալիւրը

կը տամ այն պայմանով միայն, եթէ գլուխդ հետս մին կանես»:

Կարող էի՞ կարծել թէ գաւակների տէր մարդը կրծքի տակ սրտի տեղ քարի կտոր կարող է ունենալ, այդպէս տմարդի կերպով վարուել: Նրան պատասխանեցի.— այդ իմ վճռելու բանը չի, իմ գլխատէրը գիտէ: Թողի նրան ու պատիւս վրէս եկայ տուն:

Հիւանդը թևերը ջղաձգորէն տարածելով խեղդուած ձայնով գոչեց.

—Ա՛խ, դ՛ու, ստոր շունչ, կարծելով որ բու մէջ մարդկային խղճի նշոյլ կայ, ամենանեղ ըոպէին վստահացել էի վշտաբեկ կնկանս դուռը ուղարկել: Ուրեմն դու կատարեալ գազան ես եղել. անխ, նզովից արմատ...

Կրկին ու կրկին անխ քաշեց հիւանդն ու բորրովին ուժասպառ ընկաւ բարձի վրայ:

Երեխէքն արդէն անկողնից դուրս եկել, կիսամերկ փաթաթուել էին սգաւոր մօրը ու աղեկտուր վնդալով, հաց էին ուզում:

Իմ մթնած ուղեղի մէջ այդ վայրկենին կարծես մի դող ընկաւ. այդ տեսարանը դիտելիս մի սարսուռ պատեց ողջ մարմինս. դողդողալով յենուեցի պատին: Հիւանդը լուռ էր. ինձ թուաց թէ նա արտասուում էր. մի քանի ըոպէից ետ թուլացած վիզը շրջեց դէպի կինը և ողորքելով խօսեց.

—Այ կին, դու նրան ասիր, որ գաւակներդ այսպէս պօղնդնոտարով հաց են խնդրում, ալիւրը նրանց համար ես փող ուզում և նա՛ Աստուծու պատկեր կրող մարդն արնպէս ընդունեց ազաչանքդ:

Հրեշտականման կինը խօսել չկարենալով լուռ մորմոքւում էր ու արտասուքները կայլակ կայլակ գլորում: Երեխէքը չէին լուում: Նիւանդը մի քանի ըոպէ ևս լուռ համբերելով նրանց վրնգոցին, թառանչ քաշեց ու խօսքը շարունակեց.

—Ախ կնիկ, այս երեխանց լացը սիրտս ու թոքերս խաշում են: Օրն այնտեղ է սև մթնել, որ մեր գիւղում ուրիշ ալիւրատէր չկայ. ես չեմ իմանում, երբ օտի կրկանգնեմ, որ գնամ ուրիշ գիւղից ալիւր ձարեմ: Երեխէքս սովից տանջւում են. այս հանգամանքը մեր աղին— ազնուականին քաջալերում է իւր անարգ մտադրութեան մէջ: Սովի սպառնալիքով որոշել է իմ կնոջ պատիւը— իմ միակ հարստութիւնն ու պարծանքը կողոպտել, լաւ իմանալով որ զոհն ազատուելու ելք չունի: Արարքը տմարդի է, գազանին միայն վայել: Բայց երեխէքս, Տէր Աստուած, նրանց կեանքը վտանգի մէջ է. նրանց համար հոգալը իմ պարտականութիւնն է ու ես մահճում պարկած եմ: Ի՛նչ անեմ, հաւատարիմ կին, սրտնեղութիւնս անասելի է. քեզ ինչպէս պատմեմ, որ հասկանաս:

Այս խօսքերից ետ հիւանդն սկսեց լալ: Ես

պարզ լսում էի նրա հեկեկոցը: Սակայն չանցաւ մի քանի ըոպէ, նա զուարթ ձայնով կանչեց.

—Իմ պարկեշտ կին, ընտանիքի սրբութեան պահպանութիւնը և նրա պատասխանատուութիւնը գցել ես իմ վրայ: Աստուած գիտէ, թէ հրքան սիրտս զոհ է քեզանից քու հաւատարմութեան համար, այժմ ասում եմ քեզ իմ որոշումս: Գնա կրկին ազնուականի դուռը, բայց ոչ մենակ, այլ գաւակներից հետ, թող դահիճը տեսնի իւր գոհերին: Գուցէ իւր յանցաւոր առաջարկից հրաժարւում է: Եթէ այս անմեղներին տեսնելուց ետն էլ անպատկառ կըմնայ, այն ժամանակ ինձնից էլ պաշտպանութիւն մի յուսալ, քու պաշտպանը երկնքի Տէրն է, նրան եմ թողնում իմ և գիւղատէր ազնուականի դատաստանը: Առանց վարանելու ընդունիր առաջարկած պայմանը և ալիւրը բեր, գաւակներդ սովից թափիր: Գուցէ գոհաբերութիւնը, որ իբրև մայր անելու ես գաւակներիդ սիրուց, այնքան ծանր և մեծ է, որ ամեն մի խղճով մարդ ինձ հետ քու առաջ կըխոնարհի: Գնա ազատ ես: Եթէ ես երբ և իցէ Աստուած պաշտել եմ, նա իմ փոխարէն վրէժխնդիր կըլինի, անպատիժ չի թողնիլ անիրաւ ազնուականին:

Կինն սկսեց յանկարծ բարձր հեկեկալ ու խոնարհիլ պարկած ամուսնու կրծքին: Զաւակները հետևեցին մօր ձայնին ճիշ ու ազաղակ բարձրացնելով. ողջ տունը սուգ ու շիւանով

լցուեց: Քարասիրտ տեղովս փշաքաղուեցի: Ո՞վ էր այդ սրտաճմլիկ տեսարանի պատճառը: Ես, ազնուական կոչուող զազանս, ուզում էի այդ խեղճերի վերջին ունեցածը կողոպտել, ընտանեկան սրբութիւնը կործանել: Այս մտածելով վրէս զարհուրելի դող եկաւ, կոկորդս չորացաւ, շունչս կտրուելու վրայ էր, խեղդուում էի: Ահն ինձ պատեց, չլինի թէ յանկարծ թուլութիւն գայ վրէս, ուրիշի պատի տակ ընկած քնամ: Ուժերս լարելով ինձ թրեցի այդտեղից ու մի կերպ ինձ հասցրի ամբարիս մօտի սենեակը ու ընկայ չոր տախտի վրայ: Շունչս ուժով էի հաւաքում. սիրտս ուզում էր տեղից պոկ գալ: Քանի որ հիւանդի վերջին բառերը միտս էին ընկնում, այրող մուխը ոնգերիցս մլլում էր: Գէշ արարքներս ժողովուել, հազար գլխանի օձի պէս առաջս տնկուել էին, նայում էի նրանց ու սոսկում:

Մի փոփոխութիւն էր նշմարում ներսըս. ես ուզում էի ուրիշ գառնալ. անպատկառ ազնուականը ատելի էր ինձ, սկսում էի խայտառակել, անխնայ հայհոյել նրա ընթացքը: Բայց դեռ սիրտս չէր հովանում, ներսըս բոցավառուածի պէս այրում էր: Ողջ օրը այդ վիճակում տանջուեցի քաղցած ու ծարաւ: Խստապէս պատուիրել էի ոքմին ներս չթողնել, մինչև ինքս չըկանչեմ: Իրիկնադէմն էր. ծառան ահ ու դողով դուռը բաց արեց ու շէմքից խօսեց.

— Աղա, մի կին եկել է ալիւր առնելու, քեզ է հարցնում:

Տեղիցս վեր թռայ. չլինի՞ նա է, ասի ու ծառայից առաջ ելայ սրահը: Աչքիս տեսածն ինձ այնպէս ցնցեց, հէնց իմացայ ճակատիս մուրճով խփեցին: Առաքինի կինն երեխանց թաթերից բռնած բախում կանգնած էր: Նրա վրայ առաւօտուայ անփստահութեան հետքը չկար: Ինձնկատելով առաջ եկաւ ու երեսիս շեշտակի նայելով սրահը մտաւ: Հայեացքն ասում էր, որ նա անագորոյն վճիռ արած, իրագործման է դիմում: Այդ բոպէին ինձ թուաց, թէ նա սրբի պէս փայլում է. իմ աչքում նա այլ ևս կիրք բորբոքող գեղեցկալանջ կինարմատ չէր, այլ մի լուսափայլ հրեշտակ: Երևի այդ էր պատճառը, որ մեր դերերը փոխուել էին. այժմ ես էի անփստահ դարձել նրա ներկայութեանը, շփոթութիւնից լեզուս կապ էր ընկել: Հարսն ինձ նայելիս կարծես ասեղներ էր շող տալիս և աչքերս ծակծրկում: Մի քանի բոպէ լուռ տանջուելուց ետ վերջապէս խօսեցի.

— Ներիր ինձ, ո՞վ պարկեշտ հոգի, այսօրուանից դու իմ հարազատ բոյրն ես և իմ բերանի սրբութիւնը:

Նա մնաց վարանուած: Ի՞նչ էր սպասում և յանկարծ ի՞նչ է լսում: Ես շարունակեցի խօսքս.

— Քու կարիքը երկու կող էր, միամիտ կաց, երկու ջուալ կուզարկեմ, միայն թէ իմ յանցան-

քը ներես: Գլխովին մեղապարտ եմ ըսու ընտանիքի առաջ, մեղայ Աստծու, քոյրիկ:

Նա անխօս լսում էր: Նա իսկոյն ձայն տուր ծառաներիս ու մատնացոյց անելով երկու լիք ջուալները վրայ հրամայեցի, որ հիւանդ հարևանի տուն տանեն: Բոլորն էլ գարմացել էին պատուէրիս վրայ, ամենից շատ սիրուն հարսը. որովհետև բոլորովին նման չէի առաւօտուայ գազանին: Այդպէս վարուելիս տեսնում էի, որ ներքուստ թեթևութիւն եմ զգում, սրտիս վրայի ճնշող քարերը ընկնում են: Երևի հոգուս փոփոխութիւնը նկատելի էր դէմքիս վրայ, էլ առաջուայ պէս զգուելի չէի, ուստի հրեշտակ հարսը զուարթադէմ ժպտաց դէպ ինձ: Այդ վայրկենին կարծեցի թէ եօթներորդ երկնքումն եմ: Առաջին անգամն էր, որ ամբողջ էութեամբ ինձ բաղդաւոր էի զգում: Անասելի հաճոյքով պատասխանեցի նրա ժպտին: Հարսը հարազատ քրոջ պէս վստահ խանտաղատանքով սկսեց նայել աչքերիս ու քաղցր ժպտալ: Երջանկութիւնս ծայր չունէր, հոգիս ցնծում էր հազուադէպ երանութիւնով: Մօտեցայ քաղցից սքլած մանուկներին, մէկ մէկ գրկեցի, գուրգուրեցի, համբուրեցի: Նրանք էլ երկիւղով դիտում էին ինձ իրանց մատաղ աչքերով:

—Սիրուն գառնուկներ, ասի նրանց, այսօրուանից ձեզ չեմ ջուկիլ իմ սեպհական գաւակներից, լաց միք լինիլ, գնացէք հայրիկի մօտ,

հորէս ես էլ գալիս եմ նրան տեսնելու: Հարսն այսքան միջոց միայն լսում ու դիտում էր ինձ. վերջապէս լի կուրծքով շունչ քաշեց, բոլոր վիշտ ու երկիւղ վանեց ու ձեռն ինձ մեկնելով խօսեց.

—Շնորհակալ եմ, մեծ եղբայր, ապրի արև: Այս արարմունքիդ վրայ Աստուած էլ է ուրախանում, ես էլ:

Այս ասեց կորովամիտ կինը և թեթևացած սրտով մանուկների հետ գնաց իւր տուն:

Ես էլ գնացի իմ տուն: Երբ ներս մտայ, պէտք էր տեսնել կնոջն ուրախութիւնը, էլ խօսք չէր գալիս բերանը, որբ մանուկի պէս մէկ ձեռներս էր լիզում, մէկ ցնծութեան արտասուքներով երեսս ողողում: Ամեն ինչ զիտէր: Երբ լսեց թէ ես հիւանդին տես եմ գնում, ինչ որ տանն ընտիր ուտելիք ու խմելիք ունէր, ջոկ ջոկ կապոցներում բաժին դրեց ու ծառաներին տուեց, որ ինձանից առաջ տանեն:

Գնացի հիւանդի կուշտը, նա արդէն լսածով միթարուած սպասում էր ինձ: Մեղապարտ լինելս լաւ էի զգում. ոտս շէմքը դրի թէ չէ, ուզում էի չոքեմ ու այնպէս նրա մահձին մօտենամ, բայց հոգիս գժոխքից փրկող հարսն այդ նկատելով թեիցս բռնեց, չթողեց: Հիւանդի ձեռն առնելով սկսայ լալ ու ամենը, ինչ որ նրա ընտանիքի մասին մտքովս անց էր կացել, միառմի խոստովանել:

Այդ զղջումն ամեն կասկած փարատեց. ես հիւանդին համբուրեցի իբրև եղբայր, հրեշտակ հարսն էլ ինձ համբուրեց իբրև քոյր. այդ մահճի մօտ կապուեց մի անկեղծ բարեկամութեան գաշն, որ մինչև օրս էլ մնում է: Հանգիստ խղճով դարձայ ընտանիքիս գիրկը ու նրա խաղաղութեան մէջ միայն սկսայ որոնել երկրաւոր բաղդը: Տարաբաղդ կինս այդ օրից ինչպէս թառամած վարդի թուփ սկսեց ուղղուել, նորից փթթել: Ես պատկանում էի միայն իմ ընտանիքին: Նոգսիս առարկան դարձան չքաւոր դրացիները. ամեն մի հարս համարուեց ինձ քոյր և ամեն մի հիւանդ ինձ հարազատ եղբայր: Կինս այն առաքինի հարսին սիրեց ինչպէս մի գերագոյն էակի, որ կարողացել էր ինձպէս ճամբից դուրս եկածին ընտանիքի գիրկը բերել:

Ահա ընկերներ, գլխովս անցածը, որ ճիշտ ու ճշմարիտ պատմեցի ձեզ, իսկ վարձ ու պատիժս սպասում եմ Սրարչից:

Չոքեց դէպի լուսամուտն ու կանչեց.

— Երկնային թագաւոր, մի ժամանակ քու կորած ոչխարն էի, բուրդ կամ զղջումի շնորհով ուղիղ ճամբէն դարձայ: Եթէ ինձ բազմամեղիս ներումի արժան ես համարել, ցոյց տուր ողորմութիւնդ, երկայնամիտ Տէր:

Այս խօսքի վրայ մեծ շարժ եղաւ գեանափորի շուրջը ու յանկարծ մուտքը բոլորովին բացուեց:

— Փնոք քեզ Աստուած, կանչեցին երեք ճամբորդները ու դուրս եկան լոյս աշխարհ:

## ԵՐԵՔ ՈՍԿՈՒ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ,

Ով էլ Գ. քաղաքը մտնէր, Շահի մեծ հրապարակի վրայ կրտսնէր կերպասէ ու դիպակէ կտորներով լիք մի խանութ. մէջը երկար վերարկուով, նորածիլ բեղ ու միրուքով, կարմրաթուշիկ երիտասարդ նստած առևտուր է առնում: Ծառայողներ չունէր, ամեն ինչ ինքն՝ հարուստ խանութի տէրն էր կատարում և գործ սկսած օրից անսովոր առատածեռնութիւն էր ցոյց տալիս: Ամենայն օր խանութի դռնով անցնող չքաւորներին, մուրացկաններին երեքական ոսկի էր բաժանում: Այս բանն անխափան ամեն Աստծու օր կրկնուում էր: Եթէ չքաւորներ չէին երևում, ինքն էր փնտռում խանութը կողպելուց ետ, գտնում էր մէկն ու մէկին, իւր կամաւոր տուրքը տալիս, ապա թէ պատրաստում հանգիստ խղճով անկողին մտնելու:

Ամենն էլ զարմանում էին գեղեցկադէմ խանութատիրոջ վրայ, բայց աւելի շատ զարմացել էր գաւառից եկած մի շնորհալի երիտասարդ: Երկու երեք օր նրա խանութի մօտերէն պոկ չէր գալիս, աղքատներին առատ վարձատրելը տեսնելով գլուխը շարժում էր ու հեռանում: Մի իրիկնադէմ առևտրականը նկատելով,

որ այդ երիտասարդը դարձեալ հետաքրքրութեամբ դէպ իւր խանութն է նայում, մտքումն ասեց.

— Այսօրուայ համար որոշած երեք ոսկին բաժանել եմ, բայց զուցէ այս երիտասարդը կարիք ունի փողի, ինչո՞ւ նրան օգնութեան չըհասնել. երևի ամաչում է գայ, խնդրի: Ա՛րի բացառութիւն անեմ, մի բան ընծայեմ:

Ու ձեռի նշանով մօտ կանչեց. — այ եղբայր, երևի դու մի կարիք ունես, որ այդքան խանութիս նայում ես: Առ քեզ այսօր մի ոսկի, զնա կարիքդ հոգան, վաղն էլ կըգաս, դարձեալ կստանաս:

Երիտասարդը կարմրելով պատասխանեց.

— Ողորմած տէր, ես ոչ հիւանդ եմ և ոչ ծեր, ինչո՞ւ ես ողորմութիւն տալիս: Ինձ խանութիդ դուռը բերողը քու բարեսրտութեան համբաւն է, որ ուղջ քաղաքում տարածուած է: Արարմունքդ ինձ այնքան է դուր գալիս, որ կըցանկանայի քեզ նման մարդու մօտ թէկուզ ձրի ծառայել:

— Դէմ չեմ, եթէ ինձ մօտ ծառայել ուզում ես, ուրախութեամբ կընդունեմ, միայն մի պայմանով, որ ազնիւ, հաւատարիմ պահես քեզ, ամեն ինչ պատրաստ կստանաս թէ բնակարան և թէ ուտելիք: — Մեծ սիրով, պատասխանեց երիտասարդը և խոնարհ գլուխ տալով դարձաւ նրա գործակատարը:

Այդ օրից անցաւ մի ամիս, հինգ ամիս, մի տարի, գործակատարը տեսնում էր ամեն օր աղքատներին երեք ոսկու բաշխումը. ոչ աւել էր տալիս և ոչ պակաս: Պարզ նկատում էր թէ ինչպէս իւր տէրն անհանգիստ է դառնում, երբ փողոցով չքաւոր չի անցնում ողորմութիւնն ստանալու: Շատ սրտով ուզում էր այդ ողորմութիւն տալու պատճառն իմանալ, չէր համարձակում բերան բանայ: Շարունակում էր դարմանալի եռանդով ու հաւատարմութեամբ ծառայել տիրոջը: Երկուսն էլ անչափ իրարից գոհ էին. տէր ու գործակատար ոչ թէ իրար յարգում էին, այլ կարծես ծածուկ իրար քնքոյշ սիրում էին: Բնաւորութիւններն այնպէս իրար բռնած էին, որ տարիներ ընթացքում ոչ մի անհամութիւն, ոչ մի թթու խօսք չլսուեց: Իրար հետ եօթ երկար տարի մի խանութի մէջ գործ կատարեցին: Վերջը գործակատարն անակնկալ ասեց.

— Տէր, տանից նամակ եմ ստացել, պէտք է գնամ հայրենիք: Մալքս անմխիթար է, որ մինչև օրս առանց կարգուելու եմ մնացել. այժմ պահանջում է, որ ընտանիք ունենամ: Արդեօք չէս նեղանալ, եթէ խանութը թողեմ գնամ:

Տէրը չափազանց տխրեց այդ լուրը լսելով, բայց չընկճուեց: Կամենալով ցուց տալ իւր անհուն գոհութիւնը՝ ասեց.

— Բարեկամ, քու պարկեշտ ու հաւատարիմ

ծառայութիւնով իմ սէրը բոլորովին նուաճել էս: Գու եղել ես աւելի ընկերս, քան գործակատարս. շատ եմ ափսոսում, որ ինձ թողնում էս մենակ, չէ՞ որ ես էլ օտար եմ այստեղ. ինձ թւում էր թէ մենք յաւիտեան ընկեր ենք մտնում: Ծնողիդ մօտ դնալուն խափան չեմ լինիլ, երբ գնում ես, Աստուած քեզ հետ: Եօթ տարուայ մէջ մի անգամ վարձի անուն չես տուել. ես էլ իմ կողմից վարձ չեմ կտրել: Գեղ յայտնի է, որ իմ ունեցած կարողութիւնը այս խանութն է, որ մեծ մասամբ քու եռանդով ու շնորհքով է այսպէս լցուել: Գնա եօթ ձի վարձիր ու բեր, այս թանկագին ապրանքից բարձիր, տար քեզ համար հայրենիքումդ խանութ դիր: Այդ թող լինի քու վարձը:

Գործակատարը բարեսիրտ տիրոջ քաղցր վարմունքից զգացուած՝ սրտում երդում էր դարձեալ եօթ տարի մնալ ու նրա մեծահոգութիւնը երախտագիտութեամբ փոխարինել, բայց երբ միտն էր գալիս մօր ջերմ թախանձանքը, ուզում էր որքան կարելի է շուտ հեռանալ քաղաքից: Տխուր տրտում գնաց փողոցից եօթ զրբաստ վարձեց, եկաւ խանութի ապրանքից եօթ բեռ կապեց ու տիրոջ ձեռք երեք անգամ համբուրելով մնաս բարով ասեց ու իւր աշխարհի ճանապարհը բռնեց: Համ Գ. քաղաքից հեռանում էր ափսոսալով, համ ինքն իրան այսպէս խօսում.

— Եօթ տարի կացայ այդ բարեսիրտ մար-

դու մօտ, հարազատ եղբօր պէս քաղցր ու մրտերիմ էր հետս: Ինչո՞ւ մի անգամ վատահութիւն չունեցայ հարցնելու, թէ ի՞նչ է պատճառը, որ օրական երեք ոսկի ողորմութիւն է տալիս, ոչ աւել, ոչ պակաս: Այսքան անհետաքրքիր մարդ կըլինի, ինչ որ ես եմ: Գուցէ կեանքումս էլ նրան չը տեսնեմ. աւելի լաւ չի, որ ետ դռնամ, սիրելի տիրոջիցս դրա պատճառը հարցնեմ, յետոյ հանգիստ սրտով գնամ մօրս մօտ:

Այս որոշումն անելով պատուիրեց. — Էջգրաստավար, մի՞ք գնալ, ետ դարձէք քաղաք:

Նրա զթասիրտ տէրը խանութում նստած վաճ վաճ էր անում բազդաւորութիւն կորցնողի պէս, ցաւում էր, որ այնպէս պատուական գործակատարը իւր ձեռից ընկաւ:

— Ասենք թէ նա խիստ համեստ էր, իւր ծառայութեան սահմանից չէր դուրս գալիս, որ հետաքրքրուի իմ անցեալով, իմ լեզուս ինչո՞ւ էր կապուել, ինչո՞ւ չէի գլխիս եկածը սրտաբաց նրան ասում: Գուցէ նա էլ փոխադարձ սիրէր ինձ ու մօտս մնար: Այսուհետեւ էլ բանի տարի եմ ապրելու աշխարհի վրայ, որ նրա պէս հաւատարիմ, մաքուր հոգին ինձ հանդիպի: Նրան եօթ տարի ամեն կողմով փորձել էի ու ընտիր գտել, ինչո՞ւ ձեռից թողի, ախ ու վաճ...

Առևտրականն այս մտամոլոր ժամանակին յանկարծ գլուխը բարձրացնելով տեսաւ սիրելի գործակատարին իւր առջև կանգնած: Բաղդա-

ւորուած դէմքով ազատ շունչ քաշեց ու ձեռք մեկնելով դէպի նա ուրախ ճչաց.

— Փառք ստեղծողին, որ իմ վիշտը տեսնելով քեզ ճանապարհից ետ է դարձրել: Կրֆնաս ինձ մօտ, մենք երկսով եղբօր պէս կապրենք:

— Ոչ, ողորմած տէր, ես այդ մտքով չեմ վերադարձել, այլ քեզանից խնդրելու եմ մի բան. եթէ կրօժարուես, լաւ, եթէ չէ, իմ բաժին ապրանքը թողնելու եմ այստեղ և ինքս պարապ ձեռով գնամ հայրական տունս: Ինձ համար աւելի թանկ է տիրոջս լիուլի յարգանքը հետս տանել, քան թէ նրա նիւթական կարողութեան մի մասը:

— Ի՞նչ է խնդիրդ, ասա, հարցրեց տէրը. ի՞նչ դժուար բան պտի լինիլ, որ քեզ մերժեմ, քանի որ այս քաղաքում քեզանից մօտիկ մարդ չունեմ:

— Ասեմ, տէր: Ահա ինչ. — ես ուզում եմ լըսել երեք ոսկու պատմութիւնը, որ մինչև օրս ինձ համար գաղտնիք է մնացել:

Տէրը խիստ գոհ լսածով, երջանկացածի պէս պատասխանեց.

— Հազար բերան գոհութիւն Աստծուն, որ հաւատարիմ գործակատարիս այդ միտքը ներշնչել է, առիթ տալով, որ երկար տարիներ փակուած մի սիրտ բացուի, արևի շող ընդունի: Ահ, իմ ազնիւ գործակատար, ինչ էիք իմանում թէ հոգիս էլ այդպիսի մի հարցնողի էր կարօտ, ինչպէս

դու ես: Եօթ տարի շարունակ սպասում էի, որ մի օր գործի թէ հացի ժամանակ կըհարցնես այդ մասին. սպասելով տապակուեցի, դու ձայն չհանեցիր. համբերում էիր որ ինքս բացուեմ, ասեմ, ես այդ չարի: Պատճառը չետոյ կիմանաս, թէ ինչո՞ւ ես պէտք է լռէի: Այժմ Աստուած է քեզ խօսեցնողը, դրանից փախչել չեմ կարող: Երեք ոսկու պատճառը մի խոր վիշտ է, բաւական ժամանակ սրտիս վրայ ծանրացած: Դու առաջին աղամորդին ես, որ լսելու ես իմ բերանից, բայց ոչ այս ըոպէիս, այլ վաղը: Մինչ այդ դու գործ ունես կատարելու: Իմ խանութի հանդէպ, հրապարակի միւս կողմը մի կոյր մարդ կայ, որ ամեն ըոպէ գլխին ու ծնկներին խըփում է: Նրա վիշտը անշուշտ իմից մեծ է լինելու. առաջ գնա նրան խօսեցրու, երբ կարենաս նրա ցաւը հասկանալ, չետոյ արի իմ պատմութիւնը լսի:

— Շատ բարի, ասեց գործակատարը և գնաց ձերունու մօտ, որ կարմիր փառակալած աչքերով նստած էր: Բարև տուեց, բարև առաւ ու հարցրեց.

— Այ այլևոր, կարո՞ղ ես ինձ ասել, պատճառն ի՞նչ է, որ այսքան տարի ծնկներիդ խըփում ես ու ասում. — Աստծու տուած պարգևով գոհ չեղողին, այս էլ քիչ է:

— Ինչո՞ւ չի կարելի, որդի: Շնորհակալ եմ, որ աշխարհի ուրախ վայելքները թողած ե-

կել ես ինձպէս ողորմելու վշտով հետաքրքրուում: Միայն ինձնից աւելի ալեոր մի մաշկակար կայ, վերև մեծ բարդի փեշակում նստած կարկատան է անում ու ամեն անգամ թել քաշելիս աչքերը երկինք գցում, անխ անում: Նրա վիշտը իմից հին պէտք է լինի: Գնա առաջ նրա «անխ»-ի պատճառն իմացիր, յետոյ արի ինձ մօտ, իմ պատմութիւնը լսիր:

— Լաւ, ասեց գործակատարը ու գնաց մաշկակարի մօտ: Բարև տուեց, բարև առաւ ու հարցրեց.

— Մեծ վարպետ, եօթ տարի այս քաղաքում վաստակ անելուց ետ պատրաստում եմ ծնողներին մօտ գնալ, միայն ուզում եմ իմանալ, թէ դու ինչ վիշտ ունես, որ ամեն անգամ երկինք նայելիս անխ ես քաշում: Դրա մէջ մի խրատ կըլինի, ասա լսեմ:

— Շատ բարի, սրբի, երբ ցանկանում ես, կըպատմեմ, միայն ես անօթի եմ, ինչ սրտով խօսեմ:

— Դրա հոգսը իմ վզին, վարպետ, ասեց գործակատարը ու շտապով բերեց լիառատ ուտելիք ու խմելիք, դարսեց առաջը:

Մաշկակարը ձեռ մեկնեց, լաւ կուշտ կերաւ, գոլարթարար գինին էլ վայելելով բացականչեց.

— Օրհնեալ լինես, որդի, շատ ժամանակ էր, այսպէս ճաշ չէի կերել: Կարը ձեռն առնելով համ սկսեց բանել, համ այսպէս խօսել.

«Աչքս բաց եմ արել այս փեշակում, սա համ իմ ննջարանն է, համ իմ արհեստանոցը: Ինչ տեսակ հին շէնք էլ վարձեմ, ամսական վճար պէտք է տամ, իսկ այստեղ անփող եմ մնում: Եւ ինչ վարձ տամ, երբ ինքս ուտելու բան չունեմ: Երիտասարդ ժամանակս էլ աղքատ արարած էի: Մի օր նստած չոր հացն առաջիս մտածում էի սիրուն աշխարհի վրայ ու տխուր երգում էի, յանկարծ տեսայ մի հսկայ թռչուն եկաւ այս մեծ ճղան վրայ թառ եղաւ: Ես զարմացայ, երկար նայեցի ու ասի՛ ով գիտէ քաղցած է այս երկնքի թևաւորը, նրա համար է մօտս եկել, անրի կերակրեմ: Բոլոր հարստութիւնս մի քանի սև փող էր, վազեցի կողքի խանութից ոչխարի ջիգաբ առայ, բերի ճղան վրայ դրի ու ասի. «այ թռչուն, հէնց իմանանք եղբայրս ես, կեր կշտացիր»): Ես շարունակեցի իմ չոր հացն ուտել ու վշտերս երգել: Նա համ կտցահարում էր ջիգարը, համ երգածս ուշադիր լսում: Ես այնպէս եմ կարծում, որ նա մարդկային լեզուն հասկանում էր: Մէկ էլ այն տեսայ, ծառից իջաւ, խոշոր կտուցը գցեց գոտիկս ու ինձ շալակն առնելով տարաւ դէպի երկինք: Մարտափից քիչ էր մնում հոգիս տամ, վախից աչքերս ամուր փակեցի, որ ներքև չընայեմ: Երկար ժամանակ նա թևերը փռած սաւառնում էր, ես էլ մէջքին դողում էի: Վերջն զգացի, որ խիստ հով է փչում, աչքս բաց արի, տեսայ ծովի

երեսին: Ջրի մէջ կանաչապատ կղզի էր երևում, թռչունը տարաւ անտեղ վէր դրեց, ինքն անյայտացաւ: Ես ֆնացի շմած, կանգնած, հերունը ձեռիս, գզգզուած կաշէ գոգնոցը վրէս, դէս ու դէն նայելիս: Ահա լոյս ընկաւ մի շքեղ հագուստով երիտասարդ ու ինձ ասեց.—բարի ես եկել, մաշկակար եղբայր. սա իմ կղզին է և ես սրա իշխանը: Գնանք ներս, հանգստացիր, ճանապարհ փալուց անշուշտ յոգնած կըլինես:

Մարմար սանդուխով բարձրացայ մի փառաւոր սենեակ: Ասեց, որ դա ինձ համար է է պատրաստուած: Ամեն բան կար, ջուր, մաքուր երեսուրբի, նոր հագուստներ: Հերունն ու գոգնոցը մի կողմ դրի, կարգին մաքրուեցի, շնորքով հագնուեցի, տեսայ որ չէ, սիրուն տղամարդ եմ դառել: Կղզու տէրը տարաւ ամեն կողմ ման ածելու: Շատ հետաքրքիր բաներ տեսայ այդ ընդարձակ դրախտի մէջ: Իշխանը պատմեց, որ ծովի մէջ յաւերժարաններ կան քառասունի չափ, նրանք անուշ եղանակներին դուրս են գալիս ջրի ծոցից ու զբօսնում կղզու վրայ: Ինձ թուաց թէ ես արքայութեան մէջ եմ ընկել, ամեն ինչ գեղեցիկ ու դուրեկան էր, թէ օդը, թէ ջուրը, թէ ծաղիկը, թէ մանաւանդ յաւերժարանները...

—Ես միայնակ այստեղ բնութեան ծոցում երջանիկ կեանք եմ վարում. խաղաղ կեանքի ընտելացած աշխատում եմ, ահա իմ տնկած ծա-

ռերը, ծաղիկները: Մէկի էի կարօտ, որ գայ միասին եղբօր պէս ապրենք: Ինձ մօտ կայ և բնակարան և հագնելիք և ուտելիք և անմեղ զուարճութիւններ: Եթէ ցանկանաս, կարող ես երկար ժամանակ ապրել: Կարծում եմ այստեղ լաւ է, քան թէ ծառի փեշակում նստելը ունի քաշելը: Ի՞նչ կասես,

Ես ամաչեցի որ այդ երկու վիճակը իրար հետ համեմատեմ. խոնարհ գլուխ տալով ասի.—անչափ շնորհակալ եմ քու բարեսրտութիւնից, իշխան, ինչպիսի պատուէրներ որ կըտաս, այնպէս էլ կըշարժուեմ:

Ճաշի ժամանակ գնացինք բնակարան: Տարաւ նկուղը ցոյց տուեց, ուր կարամներով հին գինիներ էր թաղած:

—Այս ամենն էլ մերն են, բայց կաշխատենք չափով գործ ածել, որ մեզ օգտակար լինի, ոչ թէ մեզ յիմարացնի, ասեց ու ժպտալով երեսիս նայեց: Իսկոյն հասկացայ, որ դրանով ուզում էր մաշկակարների հարբանութիւնը ինձ յիշեցնել: Կարմրելով շնջացի.

—Միամիտ եղիր, տէր, ես նրանցից չեմ գործով ցոյց կըտամ, որ ես իմ կրքերի տէրն եմ, նրանք չեն կարող ինձ գայթակղեցնել:

—Մինչև մի տարին այստեղ հիանալի բաներ կըլինենք, եթէ աշխատանքի մէջ չըծուլանանք: Դու երգերի մէջ բազմ էիր կանչում, ահա քեզ բաղդը, այս կղզու վրայ քու բռան մէջն է, կուզես կըպահես, կուզես դէն կըզցես:

—Այս բաղդը ես շատ ամուր կրբունեմ, տէր. օրհնեալ լինի այն հսկայ թռչունը, որ ինձ հիւր եկաւ ու մի ոչխարի շիգեարի փոխարէն այսպէս մեծ բաղդաւորութեան արժանացրեց: Իբրև մաշկակար այնքան դառն օրեր եմ քաշել, ի՞նչ յիմարը պէտք է լինեմ, որ քու բարութիւնը չգնահատեմ: Ինչպէս որ կուզես, այնպէս էլ կեանք կը վարեմ:

Երգումով խոստացայ մաքուր, համեստ կեանք վարել նրա հետ, ու սկսայ աշխատել, ծաղկներ ջրել, այգու ծառերը մշակել: Երկսով բանում էինք, հէնց որ աւարտում էինք գործներս, գնում էինք ձուկ որսալու: Այդ ժամանակները նկատում էի, որ ծովի ծփանքների մէջ ճերմակ թևեր են երևում ու ջրին չխփացնելով ներքև սուզուում: Մէկն անայտանալով ահա երկրորդն էր ամբողջ մարմնով ծփում ծովի մակերևոյթի վրայ ու բոլոր ուղադրութիւնս խլում, միայն վախենում էի թէ շշուկ հանեմ իշխանի ներկայութեամբ: Օր օրի վրայ ձկնորսութեան ժամերը ինձ համար դարձան խիստ ցանկալի, բայց տանջալից: Երբեմն խմբերով յաւերժահարսները երևում էին կղզու արօտների վրայ, շրջանակի պար բռնում մինչև մութ ընկնելը, զբօսնում էին ու յանկարծ կարապի պէս չքանում: Իշխանն ամենևին ուշ չէր դարձնում նրանց վրայ. արդեօք նրա համար, որ շատ էր տեսել, թէ նրա համար, որ գրաւիչ չէին: Մի օր այնքան մօտ էինք ես ու իշխանը նրանց, որ

նրանք ժպտալով մեզ ողջունեցին ու թռթուալէ ջուրը թափուեցին:

—Տեսնում ես, ինչպէս հոգատար է բնութիւնը, ջրի մէջ ձկների հետ յաւերժահարսներ էլ է պահում, որոնք օդը ախորժելի են դարձնում իրանց ներկայութեամբ: Գեղեցիկ են արեւի ճառագայթների պէս, պէտք է նրանց գեղեցկութիւնը վայելել առանց անարատութեանը դիպչելու:

Իշխանն ինչ որ ասում էր, ես ճշտութեամբ կատարում էի. վերջին օրերը ես էլ կարծես նրա պէս միայն հիանում էի յաւերժահարսների նայելով: Օգն այնքան բաղցրն էր թւում, որ չէի կամենում ծովի ափից բնակարան գնալ: Մի օր իշխանն ասեց.

—Գիտես ինչ, կարևոր գործի համար առ ժամանակ պէտք է բացակայ լինեմ. պաշտօնս քեզ եմ յանձնում, ամեն ինչ կլինի քու իրաւունքի տակ: Յոյս ունեմ, որ լաւ կառավարես թէ քեզ և թէ կալուածքը:

Հետևեալ առաւօտ վերկացայ, տեսայ իշխանը չկայ: Երևի հսկայ թռչունը տարած կըլինէր: Բայց սրտեղ էր ապրում այդ հսկայ թռչունը, ես չգիտէի: Միայն շատ ուրախ էի, որ գլխաւորս գնաց. վաղուց ուզում էի նկուղի հին գինուց մի կուշտ խմել, քաշում ամաչում էի: Օրական մի բաժակ հագիւ էր տալիս: Այժմ երբ դարձայ լիակատար կառավարիչ, հրամայեցի ծառաներին,

որ ամբողջ կարասով նկուղից բերեն վերև, որ անուշ վայելեմ, ինչքան սիրտս ուզում է: Քանի որ ծառի փեշակի չոր հացը միտս էի բերում, ուզում էի կղզու վրայ մէկի տեղ բսան տեսակ կերակուր ուտեմ: Փառք Աստծու, ամեն ինչ սուստ էր: Բաղդաւորութեան մէջ լվլվում էի: Երբեմնապէս խելքս շողում էր, հարբած դրութեան մէջ չգիտէի, ինչ անեմ: Զուարճութեան անձնատուր լինելով աշխատելուց ձեռ վերկալայ: Ծառաներին հրամայեցի, որ հետևեն ծաղկներին, ծառերին: Ինքս սկսայ ամեն օր ձկնորսութեամբ պարապել, որ չաւէրժահարսներին շուտ շուտ տեսնեմ: Նրանք մատչելի էին դառնում հետզհետէ, բոլորին դիտում, հետները խօսում, պարում էի կանաչ արօտների վրայ: Ամենն էլ գեղատեսիլ էին ու հրապուրիչ, բայց նրանց մէջ մէկ այնպէսը կար, կարծես թագուհի: Ես մտադրուեցի նրան հարսնացու ունենալ, նա պատմում էր իրանց կեանքից, ես էլ երգում էի զանազան բաներ: Միշտ զբօսնում էինք ու զուարճանում: Յանկարծ միտս եկաւ իշխանին տուած երգումս. ինքս ինձ պախարակեցի, որ համեստ կեանքից շատ եմ ծուռել: Որոշեցի կրքի իշխեմ, լիմարութիւն չանեմ: Նկուղի հին գինին չթողեց, ասեց՝—խմիր ինձ և սիրիր բուրնարած գեղեցկուհուն: Այդ չաւէրժահարսը միւսներից բաժանուած պատում էր հետս ու ականջիս տակ քաղցր զրոյցներ անում: Միւսներն ա-

մաչում էին, ծովից շատ չէին հեռանում: Վերջը մէկ օր գտայ ինձ յանցանքի մէջ: Տարու գլխին կինս մի գաւակ ունեցաւ: Ահր սիրտս կալաւ, ասում էի.—յիմար մաշկակար, ինչի՞ տէր ես, որ կնիկ ուզեցիր: Որտեղ որ է, կղզու տէրը լոյս կընկնի, ի՞նչ պատասխան ես տալու:

Բայց իմ բաղդից իշխանը չէր գալիս: Կարծեցի թէ ամենևին չի գալու, կինս ու ես ապահով տեղաւորուեցինք պատրաստ բնակարանում ու անհոգ ապրում էինք: Տնտեսութեան վրայ անկարող էի ու զարձնել, որովհետև գրեթէ միշտ հարբած էի ու տարփանքներով զբաղուած: Մեծամտուելով ծառաների գլխին դարձել էի մի բռնաւոր. կոպիտ վարմունքիցս ամենն էլ զգուել էին, բայց վախենում էին թէ աշկարա անեն: Ինձ թւում էր թէ միւս չաւէրժահարսները նախանձում են կնոջս փառքին, նրանց դայրացնելու համար միշտ ծովի ափին էի ճաշ ուտում, հարբում, կնոջս հետ գրկուած պարում: Ո՞վ կարող էր ինձ կամ կնոջս մազի չափ անհնազանդութիւն ցոյց տալ: Վաղ առաւօտից մինչև երեկոյ պարապմունքս էր խմել, ուտել, տարփանքների մէջ ժամանակ անցկացնել: Կարծում էի, թէ այդպէս չաւիտեան վայելչութիւնը կըշարունակուի: Մի օր հիսնալի եղանակ էր, չաւէրժահարսները դուրս եկած ծովի ափին սովորական զբօսանքն էին անում: Ես կնոջս ու գաւակիս առած գնացի, նրանց հանդէպնստայ կերու-

խնամի, որ նրանց նախանձը բերեմ: Էլ անվայել բան չմնաց, որ չանենք: Երբ յղփացած ուզում էինք դառնանք, յանկարծ երկինքը ամեն կողմից սկսեց թխպել, սևակնել, մի քանի վայրկենից ետ գոռաց, որոտաց: Ուզում էի հրամայեմ ծառաներին, որ կնոջս ու զաւակիս բնակարան հասցնեն, այդ բոպէին վերևից մի սև թուխպ պոկուելով մօտեցաւ մեզ երեքիս պատեց: Շուրջս խաւարեց, ոչինչ չէի նշմարում: Այդ մթան մէջ մանուկի ձիչ լսեցի: Թուխպը զաւակիս խլելով առաւ ու գնաց: Մայրը բազկատարած լալիս էր մանուկի ետնից. նոյն թուխպը դարձաւ արագ և ուժգին ծրարուեց մօր շուրջը, իմ սիրած յաւէրժահարսին հանեց մինչև երկինք ու այնտեղից բաց թողեց: Ետևից լսելի եղաւ այս խօսքը. — պատժուիր, որ միւս անգամ ազամորդու չգայթակղեցնես:

Պարզ տեսնում էի, որ սիրուհուս մարմինը պատառ պատառ եղած երկնքից թափւում էր: Յանկարծ տեսայ այդ թխպի ծոցից դէպ ինձ սլացաւ հսկայ թռչունը, չանգը գցեց գոտիկս, թափահարելով վերև տարաւ: Եթէ բաց թողնէր օդի մէջ, չգիտեմ մինչև ներքև հասնելը քանի կտոր կըլինէի: Բայց խնայեց, ծովի վրայ չանգերից կախած սարսափ ուտացնելով հասցրեց այս փողոցը: Աչքս բաց արի ու ինձ տեսայ այս փեշակի մօտ, հերունը ձեռիս, զգզուած գոգնոցը վզիս: Ուշս ժողովեցի, միտք արի, նոր իմացայ:

Թէ ինչ փառքից եմ զրկուել: Սկսայ դէս ու դէն աչք ածել թռչունին, ոչ ծառի վրայ կտոր և ոչ հարևան կտրներին: Ճարահատած սկսայ առաջուայ մաշկակարութիւնս բանացնել ու իմ չոր հացի կտորը կրծել: Քանի այս ծառի փեշակում բանելիս լիշում եմ կղզու վրայ ունեցած փառքը, վայելած քաղցր օրերը, իշխանական կեանքն ու փարթամութիւնը, քթիցս մուխը գցում է: Անմիտ արարքներիս վրայ փոշմանում եմ, բայց ետնից չեմ հասնում: Ո՞րքան լաւ կըլինէր, եթէ ինձ գսպելով հեռու մնայի խելառ զուարճութիւնից, կըրքին անձնատուր լինելուց: Շատ տարի է անցել այն օրից, բայց ամեն անգամ թելը քաշելիս աչքերս վերև եմ գցում, կարծելով թէ հսկայ թռչունը անհ գալիս է, որ ինձ զղջացեալիս նորից այնտեղ տանի: Սպասելը գուր է անցնում, չի գալիս, որ տխուր օրերիս վերջ տայ, աչքս մնում է դատարկ ճղանը, անխաղաղ բերանիցս թռչում է: Բաղդը թռչունի պէս ինձնից փախել է, չի գալիս և չի գալու. անցածն անցած է, անի ու վախ:

Գործակատարն ուշի ուշով լսեց այս պատմութիւնը, բայց գլխի չընկաւ թէ իւր անձնականի հետ ինչ կապ ունի: Գնաց կուր ձերուհու մօտ և մաշկակարի պատմածը համառօտ հաղորդեց:

— Տեսնում ես անզուսպ ազամորդուն, ասեց ծերը. ամեն տեղ իւր բաղդ կործանողն

ինքն է: Նրան ուր էր ասում իւր կրթին անձա-  
տուր լինի, նախկին համեստ վիճակը մոռանա-  
լով խենթանայ աշխարհային վայելքներով: Դէ  
հիմի լսիր իմ գլխովս անցածը: Կեանքն անթիւ  
աղբիւրներ ունի. այն ակը, որից ես եմ խմել  
ու հարբել, ուրիշ է քան թէ մաշկակարի ակը:  
Լսիր, պատմեմ թէ ինչո՞ւ ծնկներիս խփելով գո-  
ռում եմ. «Աստծու տուածով գոհ չեղողին այս  
էլ քիչ է»: Մի օր կարելի է պատմածս քեզ օ-  
գուտ բերի:—ժամանակով ես հարուստ էի. այն-  
քան թանկագին ապրանքներ ունէի, որ նրանց  
փոխադրելու համար քառասուն շորին հազիւ էին  
բաւականանում: Ամենն էլ իմ սեպհականն էին  
իրանց սարք ու կարգով: Նսուց ասուած խօսք  
է, որ աշխարհիս վրայ ոչինչ չկայ մշտական:  
Իմ յաջողակ գործս նոյնպէս ձախուեց, տարին  
տարու վրայ գլորուելով բոլոր հարստութիւնս  
ձեռից գնաց: Ընտանիքս պահելու համար ինչ  
որ գնով զարգարանք, բան կար, ծախել էի: Ինձ  
մօտ մնացել էին շորիներն ու պարկերը, ամօթ  
էի համարում ձեռից թողնել, ասում էի՝ որ ո-  
չինչ չըլինի, գոնէ քրէհտարութիւն կանեմ, նը-  
րանով կապրեմ: Այդ յուսով սպասեցի մի օր,  
մի շաբաթ, քրէհ չըգտնուեց: 40 շորի պահելը  
հեշտ չէ, նրանց կերակրելու միջոց չունէի: Էլ  
չեմ վիշում բնտանիքիս հոգսը: Ինձ ու ինձ հարց-  
նում էի. — ինչ անեմ: Քիչ էր մնում շորիքս տա-  
նեմ ծախ բռնեմ, բայց վախենում էի ասեն՝ ինչ

անշնորհք մարդ է, ողջ հարստութիւնը կորցրեց,  
այժմ էլ գոռոզ է, չի ուզում քրէհտար դառնալ:  
Տեղս խիստ նեղ էր, երեսս չէր բռնում մէկից  
ձեռաց փող վերցնել: Ունևոր վիճակից չքաւոր  
դառնալը հեշտ բան չէ: Ճարս կտրած վերցրի  
երկու շորի իրանց տոպրակներով, տարայ շու-  
կայ վաճառելու, որ նրանով գոնէ առ ժամանակ  
ապրուստ անեմ, մինչև տեսնեմ Աստուած ինչ  
յաջողութիւն է տալիս: Տեսայ մի մարդ մօտե-  
ցաւ, վիճակիցս տեղեկութիւն հարցրեց. — մի՞թէ  
դու այն մարդը չես, որ մի ժամանակ հարուստ  
էիր ու անհամար ծառաներ ունէիր, այժմ ինչ-  
պէս ես ապրում, ինչ գործով ես պարապում:  
Ծանօթ թուաց ինձ այդ մտերմաբար հարցնող  
ձայնը: Ես սկսայ առանց թազցնելու մանրամաս  
պատմել ու խղճալի դրութիւնս նկարագրել,  
վերջն աւելացրի.

—Քրէհ անել, վաստակ անել ուզում եմ,  
բայց գործ տուող չկայ. հնդը, շնւրը վկայ, ես պա-  
րապութիւն սիրող մարդ չեմ:

—Մի վճատիլ, ասեց նա, ով քրտինք թա-  
փելուց չի փախչում, նա իրաւունք ունի ամե-  
նից գործ պահանջելու. նա դեռ ուղիղ ճամբի  
վրայ է, աշխատանք թափելով կարող ես կրկին  
նախկին դրութեանը հասնել: Եթէ սրտանց ու-  
զում ես գործ գտնել, ես քեզ կօզնեմ: Դու ա-  
սիր, որ շորիներ ունես, չես կամենալ եմ ապ-  
րանքը շուկայ բերել և առատ վարձ ստանալ:

Իմ ապրանքն այնքան շատ է, որ ամբողջ տարին դու գործ կունենաս: Եթէ համբերութիւն ունենաս աշխատելու, մի տարուայ մէջ ես քեզ ոտի կրկանգնացնեմ, դու կը դառնաս բազաբի ապահով մարդկանցից մէկը:

— Անչափ շնորհակալ կը լինեմ քու օգնութեան համար, ասի նրան, ինչ պատուէր ուզում ես տուր, յօժարութեամբ կը կատարեմ:

— Մի ջորու բեռան համար ի՞նչքան վարձ եմ տալու, օրական սրբան աժի, հիմիկուց ասա, որ պարզ լինի իմ պարտքը:

— Ինչքան կուզես, տուր, պատասխանեցի ես. բայց նա դրանով չըբաւականացաւ, կամեցաւ մի գին լսել իմ բերանից: Ես ամենաբարձր գինը պահանջեցի, մտքումս ասելով՝ եթէ այդքան չի տալ, գոնէ կէսը կը տալ. այդ էլ մեծ փող է: Սակայն վատասիրտը ես էի. նա իմ ուղած գինը լսելով ասեց.

— Համաձայն եմ. դու ընտանիքի տէր մարդ ես, պահանջածդ շատ չէ, ես աւելի կը տամ, իմ ապրանքը թանկագին բան է, դու քս ջորիներով կը բերես շուկայ, աչքիդ առաջ կը վաճառեմ ու եկամտի <sup>1/10</sup> մասը կը տամ քեզ. ընդունում ես թէ չէ:

— Ընդունում եմ ու մինչև երկինք շնորհակալ եմ քու բարեսրտութեան համար, ասի ու տուն գնալով պատրաստեցի բոլոր ջորիներս իրանց տալակներով ու ճանապարհ ընկալ այդ

բարեսիրտ մարդու հետ: Ես խորասուզուած էի մտքերիս մէջ, նա շարունակ ինձ հարցեր տալով խօսեցնում էր, կարելի է փորձելու համար, թէ ի՞նչ մարդ եմ, ազան եմ թէ սակաւապետ, նախանձոտ եմ թէ ընկերասէր: Հարց ու փորձով թափ տուեց սիրաս ու հոգիս և իւր դիտողութիւններից գոհ մնաց: Ես էլ կարծում էի, որ վատ մարդ չեմ, բայց մի հանգամանք ապացուցեց, որ ես սոսկալի փուշ արարած եմ: Գայթակղութիւնը հողի էլ է կործանում ինչ թէ բաղդաւորութիւն: Երկու օր զրոյց անելով բաւական ճանապարհ էինք գնացել: Եւ դեռ չէի իմանում, թէ ինչ ապրանք ունի: Այնքան հիացած էի նրա անձնաւորութիւնով, որ ապրանքը մոռացել էի: Երբ հասել էինք մի ձորի բերան, նա պատուիրեց որ անասունները կանգնացնեմ: Ես իսկոյն կատարեցի: Նա չօքեց մի քարափի առաջ և սկսեց ջերմեռանդութեամբ աղօթել: Գիշ միջոցից տեսայ քարափն ինքն իրան պատուեց: Աղօթողը կանգնեց ու խորհրդաւոր ձայնով ասեց.

— Գնա ներս, տես քարայրի մէջ ինչ կայ, արի ինձ տեղեկացրու:

Գնացի ու այն բանը տեսայ, ինչ որ ամենեին մտքովս չէր անց կացել: Ներսն ահագին տարածութիւն ոսկու շեղջերով լիքն էր: Դուրս եկալ ու խոր գլուխ տալով յայտնեցի, որ քարայրի մէջ ոսկու շտեմարան է:

— Այո, հէնց դա է իմ ապրանքը, ասեց նա, այդ ենք շուկայում վաճառելու: Զորիների տոպրակները վերցրու և տար լցնելով հակներ կապիր: Ես կընսկեմ դուրսը, որ շորիները չընենան:

Էլ ցնծութեանս չափ չըկար, երբ մի ըուպէ մտածեցի, թէ այդքան ոսկու  $1/10$  մասը իմ սեպհականութիւնն է դառնալու, եթէ համբերութիւն ունենամ, կամաց կամաց քաղաք տանեմ: Մտքումս օրհնելով այդ բարի մարդուն պատահած ըուպէն ու ժամը, ճիտն սրտով տոպրակները իրար ետևից ներս տարայ, դեղին ոսկով լցրի ու կապ տալով դուրս բերի: Երբ ոսկիքը մատներիս տակ զնգզնգում էին, երակներս դալարում էին, դեղին ոսկով լցրած բեռներից չորսը իմն էին, հանաք բան չիմանաս: Ապրանքի տէրը դուրսն էր կանգնած. այդ դէպքից օգտուելու համար ծածուկ լցնում էի ծոցերս ու զրպաններս: Զգում էի որ արածս գողութիւն է, կարող էր նկատուել. բայց դէ ինչ անէի, սիրտս ասում էր՝ վերցրու քանի կարող ես: Շարժուելիս ամեն զգուշութիւն բանացնում էի, որ ծոցիցս, զրպանիցս բան չընկնի: Երբ վերջին տոպրակն էի դուրս բերում, տէրը ներս եկաւ: Քարայրը նրան վաղածանօթ էր երևում, ոսկու շեղջերին չղիպաւ, այլ թեքուեց դէպի մի անկիւն, ձեռը մեկնեց վերև դրած մի փոքրիկ կապոց վէր բերեց ու ծանրաքայլ, անխօս դուրս

եկաւ: Երկուսով բեռները բարձեցինք: Ուշքս, խելքս մնացին քարայրի ոսկէ շեղջերի մօտ. իմ մէջ վճռում էի, որ ուրիշ անգամ ծածուկ գամ, շորիներս բարձեմ տանեմ: Բայց երբ երկու ըուպէից ետ անկուշտ աչքս դարձրի, տեսայ ձորի քարայրը փակուած, նախանձն ու ագահութիւնը սիրտս կալան, մի գլուխ մտածում էի նրա մասին թէ ինչպէս անեմ, որ քաղաք հասնելուն պէս ամենահարուստ մարդը հռչակուեմ:

Երբ գալիս էինք ապրանք բարձելու, այսինքն երբ զրպանումս ու ծոցումս մուկն էլ չըկար, ես ու այս բարի մարդը շարունակ իրար հետ քաղցր զրոյց էինք անում, իրար ջան ու մատաղ ասու.ձ. այժմ երբ զրպանս ու ծոցս ոսկու ծանրութիւնից ուզում են արաքուեն, պոկ գան, բարերար մարդն ամենին աչքս չի գալիս, դարձել է ինձ համար օտար, ատելի: Ամբարտաւանացել եմ, պինչս ցից արել, չեմ ուզում հետը մի բերան խօսել: Նա տէր, ես զրատաւար, բայց ներսից գոռոզութեան ձաչնն ասում էր՝ «Շորիների վրայ ուշ մի դարձնիլ»: Ուստի ես էլ պարտքս չէի կատարում, փոյթս չէր թէ շորիները սր կողմն են ծուռում: Նա լիշեցնելով պարտականութիւնս ասում էր, որ ուշադիր լինեմ, բայց ես հպատակելու փոխարէն կոպտաբար պատասխանում էի.

— Ինչ չէս կարող նայել, որ ինձ ես առաջարկում: Ասեմք թէ շորիներս վարձով տուի,

գրանով ես հօ քեզ ստրուկ չը գրուեցի: Դրանք բեռան տակ տընքում են, բաւական չէ, որ ես էլ առանձին տանջուեմ:

Նա պահանջում էր, որ ես արագ շարժուելով շորինների ետնից վազվըզեմ, այդ ինչպէս կարելի էր. չէ որ գրպանիս ու ծոցիս ոսկիները կը թափուէին: Տեսնում էր, դանդաղ եմ շարժուում, ինքն էր վազում շորինների ետնից, հէնց որ նրանք ուղիղ ճամբէն թողած թփերի մէջն էին ընկնում:

Նրա մեղմ բնաւորութիւնից երես առնելով հետևեալ օրը տրտուռի մեծացրի: Նա կրկին լռեց, ընդդէմ բան չասեց: Երբորդ օրն արդարութեան անուսով սկսայ բողբել:

— Ինչո՞ւ վարձատրութիւնն աշխարհի վրայ աշխատանքի համեմատ չի, մէկն անիրաւ կերպով խիստ շատ է ստանում: միւսը բոլորովին քիչ: Օրինակ՝ այս ինչ խիղճ է, երկուսս էլ մարդ ենք. ես գրաստավար եմ կոչւում, դու տէր: Արդարութեամբ եթէ դատենք, այսպէս չպէտք է լինի: Տոպրակները տանջուելով ես լցրել եմ, դու դռանը պարապ կանգնել ես, այդ մէկ: Տոպրակներն իմ սեպհական են, եթէ գրանք չլինէին, ինչի՞ մէջ պէտք է լցնէիր որ բարձէինք, այդ էլ երկու: Զորիքը իմոնքն են, գրանք որ չլինէին, քու ոսկին շուկայ չէ ըզնալ, կըմնար այրում կիտուած: Բու արածն այն է, որ չոքել ես երկու վայրկեան, աղօթք անելով ձեռներդ տարածել քարափի վրայ: Այդ

չնչին աշխատութեան համար երեսուն վեց բեռ ոսկու աէր ես դառել ու չես ուզում շորինների քշելուն մասնակցել:

Երկար լռելուց ետ վերջապէս խօսեց.

— Ա՛յ եղբայր, ինչո՞ւ ես տրտնջում ու մեղքդ աւելի ծանրացնում, չէ որ մեր պայմանն այդպէս է: Ամեն մի շորու համար դու ինձանից մի ոսկի վարձ էիր ուզում, ես այդ քիչ համարելով բոլոր եկամուտի <sup>1/10</sup> մասը քեզ խոստացայ: Ինչո՞ւ դո՞ւ չես որոշած մասով: Եթէ ոսկու փոխարէն քար կամ հասարակ փայտ բարձել տայի, այն ժամանակ ինչպէս կըվարուէիր: Լաւ յատկութիւն չէ, որ քու մօտ նշմարում եմ: Անգոհ, ապերախտ լինելը մարդու փորձանքի մէջ է գցում, լաւ կանես, որ քեզ զսպես:

Առանց մազաչափ ու զարձնելուն նրա խրատներին, շարունակում էի աներեսի պէս դժգոհալ:

— Դու ինչո՞ւ ես ինձանից աւելի, ինչո՞ւ դու 36 բեռ ոսկի ունենաս, ես միայն 4: Իմ շորինները տանջուեն, քեզ պէս յափշտակիչը վայելի՞:

Նայոյանքներն անընդհատ թափուում էին բերանիցս, նա մի հատ անախորժ խօսք չէր արտասանում, այլ մեղմ ու հանդարտ խօսում էր. — բարեկամ, դու քո ընտանեկան վիճակը մանրամաս ինձ պատմել ես, եթէ չորս բեռ ոսկի ստանաս քու աշխատանքի վարձ, դու կըդառնաս քաղաքի անուանի հարուստը: Իմ ծանօթութիւնն

ու բարեկամութիւնը շարունակուելու է, ամեն մի ամիս դու և քո շորիները այդքան վաստակելու էք իմ միջոցով: Այժմեան արարքդ գովելի չէ, խոհեմ եղիր. գերազաս համարիր անխոնջ աշխատանքի միջոցով հարստանալը, քան թէ անակնկալ կերպով գանձի տէր դառնալը:

Փոխանակ այդ խելօք իրատին լսելու, կապս ու ամօթըս կորցրած ամբարտաւանի պէս դու աացի:

— Կեղծաւոր շարականներդ քեզ համար պահիր: Եթէ ուզում ես հաւատամ, որ խղճմտանքով ընկեր ես, արի շորիների բեռը կէս անենք: Եթէ այդ բանին համաձայն չես, բեռները քանդում եմ ու տոպրակներս դարդակում: Այն դու, այն քու ոսկին, շալակիր տար, տեմեմ այս ամայի դաշտում սրտեղից ես շորի գտնում:

Նա առանց մազաչափ վրդովուելու խօսեց:

— Համովութիւնը Աստծու դուրեկան բանն է. մի ճանապարհ է, մենք երկու հոգի, ինչո՞ւ խռով ու անխօս մնանք իրարից: Յօժար եմ, թող քու ուզածը լինի, 40 բեռների կէսը քոնը դառնայ, ընտանիքիդ եմ բախշում, որդիքդ կըրթելու պէտք կըլինի: Այժմ հօ գո՞հ ես, հա՛: Դէ ձեռ մեկնիր, որ իմանամ հաշտուել ես, գոնէ մնացած ճանապարհը ուրախ խօսելով գնանք: Մարդկային կարճ կեանքը ինչո՞ւ գուր դառնացնենք:

Այդ լսելով ցնծութիւնս չափից անցաւ:

Քսան բեռ ոսկու տէր էի. էլ ս՛վ կըլինէր քաղաքում իմ չափ հարուստ: Դէմքս անուշացրի և հետը քաղցը զրոյց տալով բաւական տեղ գնացի. համոզում էի ինքս ի՛նձ, որ ուղեկցիս պէս պատուական ու բարեխիղճ մարդ աշխարհում ոչ եղել է և ոչ կըլինի: Խօսք ու զրոյցը ընդհատեցինք, բեռները վէր դրինք՝ որ մի քիչ հանգստանանք. շորիների ետնից ստով քաշ գալուց յոգնել էինք: Յանկարծ մի նոյովեալ ձայն սրտումս թնդաց.

— Ծճմարիտ է այժմեան քու հարստութեամբ քաղաքում հաւասարրդ չունես, բայց եթէ 40 բեռ լրիւ ոսկի ունենաս, ողջ աշխարհում անգամ հատրդ չի լինիլ: Այս քշախօս ողորմելի մարդը ինչո՞ւ պտի քեզ հաւասար բաժին ունենայ: Մի հարուածի չի դիմանալ. ամայի դաշտում մենակ երկուսդ էք, կուռըդ ամուր վրայ բեր, իսկոյն շունչը կըփչի: Ո՞վ է իմացողը թէ ի՞նչ ես արել: Բոլոր գանձը քեզ սեպհականացրած կըմտնես քաղաք:

Անիծուած լինի հազար բերան ազահութիւնը, կըկին ինձ տիրապետեց, սկսեցի հանգ հունգս, կերպարանքս պղտորել, կոպիտ վարմունքներ ցոյց տալ ուղեկցիս: Նա պայծառ դէմքով վրէս նայեց ու հարցրեց.

— Հը՛, էլ ի՞նչ կայ, ինչո՞ւ ճակատիդ երակն ուռցրել ես. չլինի՞ մի մոռացած բան մտաբերել ես:

—Շատ ճիշտ ես նկատել: Ես իմ մէջ մտածում եմ.— ոսկու մի կէսը իմն է իբրև իմ արդար աշխատանքի վարձ, որովհետև ծանր տանջանքներ քաշելով ոսկին լցրել եմ տոպրակների մէջ, որոնք իմ սեպհականն են և բարձուած են ջորիների վրայ, որ նոյնպէս իմ սեպհականն են: Միւս կէսը, որ ահագին հարստութիւն է, ինչո՞ւ պէտք է քեզ պատկանի, միթէ հէնց նրա համար, որ ոսկու քարայրը մատով ցոյց ես տուել: Ձէ, այդ չնչին ծառայութեան համար այդքան վարձ չի հասնիլ քեզ: Միտք արա, տես ո՞րքան անիրաւացի բան է բռնածդ գործը: Արդարն այն կըլինի, յօժարակամ խոստովանես, որ ջորիների բոլոր բեռները իմ հալալ քրտինքն են, որ դու նրանցից մի հատ ոսկի բաժին չունես: Եթէ առաջարկիս համաձայն չես, համեցիր իրաւունքը ուժով պաշտպանիր:

Այս պրակերես խօսքերն ասի ու բազուկներս վեր բշտելով դէմը կանգնեցի: Նա ծպտուն չըհանեց, մնաց խեղճ անձարի պէս երեսիս ապշած նայելիս: Արիւնալից աչքերով կռուփս սրղմած նրա քթին դէմ արի:

—Շուտ ասա, ոսկու բեռներից ձեռ ես վերցնում թէ չէ:

Նա ոչ մի յուզմունքի նշան չերևացրեց, այլ սառնարիւն կերպով պատասխանեց.

—Ընդդիմանալու ոչինչ չունեմ, կարելի է կարիքդ մեծ է, թող 40 բեռն էլ քեզ լինի, ես

առանց ոսկու էլ կապրեմ աշխարհի վրայ: Իմ ցանկութիւնն է, որ դու բաւական մնաս, անի խաղաղ ու հաշտ իրարից բաժանուենք:

Իրար ձեռ տուինք ու հեռացանք: 40 ջորու բեռ ոսկին իմն էր. էլ սրտիս գոռոզ ուրախութեանն ի՞նչը կըհասնէր: Արհամարհանքով նայեցի աղքատ չքաւոր ուղեկցիս ու աւելացրի.

—Սպասիր, ինձ պէս ողորմած հարստի մօտից դատարկ մի գնալ. փէշդ բաց արա, մի բուռ ոսկի տամ, տար կարիքդ հոգա:

Նա շնորհակալութիւն անելով հրաժարուեց, ոչ մի ոսկի ողորմութիւն չընդունեց, բայց այնքան համբերող մարդ էր, որ մի բերան չասեց թէ ես ազահ եմ: Ծանապարհս շարունակեցի ուրախ, ինքնագոհ: Ուղեկիցս ինձնից հեռու ճանապարհի միւս ափով գնում էր գլխակախ հանգիստ: Ես երգում հրճում էի վիճակիս վրայ: Նա երբեմն երբեմն գլուխը բարձրացնում էր բացականչութիւններիս վրայ ու աչքի տակով սարսափած նայում:

Սիրտս ներքևից բոթելով ասեց.

—Այս մարդը որ լուռ է, անպատճառ մօտը գաղտնի բան ունի: Թէ չէ յիմար հօ չէր, որ ոսկու բեռներն անտրտունջ ինձ տար: Այդ գաղտնի բանը եթէ լինի, քարայրից վերցրած կապոցը պէտք է լինի, գուցէ մէջը հագուազիւտ թանկ իր կայ, ինչո՞ւ թողեմ, որ նա մենակ սեպհականի: Ձէ, թողողը չեմ, գոռացի ինքս ինձ,

այս ուժեղ կոնքերս էլ ո՞ր օրուայ համար եմ պահում:

Սպառնական դիրքով վազեցի դէպի նա ու ասի.

—Պորամանկ, այժմ հասկանում եմ թէ ինչո՞ւ լուռ ու մունջ ոսկու բեռներն ինձ տուիր: Շուտով ծոցիդ կապոցը հանիր, թագըրած մի պահիր, նրա մէջ աւելի մեծ գորութիւն կայ, դրանից նոյնպէս ինձ բաժին կը հասնի:

Նա դարձաւ ինձ ու արդար վրդովմունքով խօսեց.

—Այ ադամորդի, անհուն գանձի տէր դարձրի, էլի գո՞ն չես վիճակիցդ: Ի՞նչ է մտել սրբտիդ մէջ, որ հասարակ բանից էլ բաժին ես պահանջում:

Ես նշանակութիւն չըտուինրա վրդովուելուն, օձիքից բռնելով ստիպեցի, որ իսկոյն կապոցը հանի ու ինձ տայ, թէ չէ այնպէս կը զրբեկացնեմ գետնին, որ շնչահան կը լինի:

Կատաղութիւնս եկաւ, որ հրամանս ուշացնում էր: Բայց չէր էլ ընդդիմանում: Երկրորդ անգամ գոռացի.

—Ի՛է հանիր, թէ չէ դմբդիս տակ բան հոգի կանեմ:—Պաղաղասէր ուղեկիցս վշտահար դէմքով ան քաշեց ու կապոցը ծոցից հանելով ինձ մեկնեց: Կարծում էի թէ խիստ դժգո՞ն է, որ վերջին հարստութիւնը խլում եմ: Շտապով կապոցը բաց արի ու մէջը գտայ հասարակ

փոշի, ուրիշ բան չկար:

—Սա ինչ բան է, հարցրի հրամայական ձայնով: Հասարակ փոշի է երևում, բայց երեւի մէջը աներևոյթ գորութիւն կայ: Անպէտք փոշին խնամքով չէիր դնիլ ծոցդ: Ասա, կախարդ, ի՞նչ է սրա գորութիւնը:

Նա պատասխանեց.—Սա այնպիսի փոշի է, ում աչքի մէջ մի պտղունց ածուի, էլ իւր կեանքում աչքացաւ չի ունենալ:

Ես բարկանալով վրայ բերի.—Եթէ ագահ չես, ինչո՞ւ էիր ուզում այդպիսի հազուադիւտ փոշին մենակ յափշտակել, մի՞թէ այդքանից երկու պտղունց ինձ բաժին չի հասնիլ:

Այս ասելով ուսերից բռնեցի ու կոպիտ կերպով թափ տուի:

—Իրա գորութիւնը եթէ իմ վրայ չես փորձիլ, այս ըոպէիս քեզ կսպանեմ:

Նա պատասխանեց.—զուր ես նեղանում ե ինձ մարմնական ցաւ պատճառում: Եթէ քեզ ոսկու բեռներ չըխնայեցի, այս չնչին փոշին ինչո՞ւ պէտք է խնայեմ: Երբ ցանկանում ես, փափագըդ այս ըոպէիս կը կատարեմ: Ի՛է, պարկիր մէջքիդ վրայ, այս հազուադիւտ փոշին գործ ածելիս խիստ զգուշութիւն է հարկաւոր:

Ես իսկոյն գետնին պարկեցի ու պարկած տեղից գոռացի.—տես, ագահութիւն չանես, փոշին վերցնելիս պտղունցը լայն բաց արա, չըխնայես փոշին, թէ չէ հոգիդ կը հանեմ:

Ուղեկիրցս ինձ չըվշտացնելու համար պըտողունցը լիք մեկնեց, փոշին թափեց բաց աչքերիս մէջ, կոպերը փակեց ու վերկացաւ:... Այն թափելն էր, որ աչքերիս գլխին քար գցեց. մժմժոցն ու մըղկտոց սկսեցին: Իսկոյն ան ու վիշ անելով պարկած տեղից վեր թռայ, մատներով շոշափելով այս ու այն կողմ ընկայ, ոչինչ չդատայ: Ոչ մարդը կար, ոչ շորիքը և ոչ ոսկու բեռները: Ամեն ինչ անհետացել էր: Աչքերիս այրոցը անասելի էր, վառուով էր կարծես մէջը վառօղ ածած: Ոսկու բեռները չը կային, ասի, երևի նրանց երազում եմ տեսել, էհ, փառք Աստծու, աչքերիս ցաւն էլ իբրև երազ կըլինի ու կանցկենայ: Ձեռս միամիտ տարալ գըպանս, գնգգնգոց լսեցի, դրանից ցնցուելով սըտապատառեղայ:—Այ քեզ պատուհաս, գըպանուսն ոսկիներ կան, ուրեմն պատահածը երազ չէ, իրականութիւն է: Վայ աչքերս, գոռացի ու արորեցի, որ փոշին հեռացնեմ: Ոչ մի ճար չեղաւ, աշխարհը մնաց ինձ համար խաւար ու ես ագահս նրա մէջ թըշուառ: Մի կերպ խարխափելով հասայ քաղաք: Աչքերիս լոյսի հետ կորցրել էի քառասուն շորիներս: Գըպանիս ու ծոցիս մի քանի տասնեակ ոսկիները տարիների ընթացքում ծախսելով մնացի դադարկածն ու աշխատանքի անընդունակ: Բարի մարդկանց տուրքով այսպէս իմ տխուր գոյութիւնս քաշ եմ տալիս: Ագահութեանս պատճառով ամեն ինչից զրկուեցի:

դրա համար ծնկներիս խփում եմ ու ասում.— Աստծու տուած բաժնով գոր չեղողին այս կուրութիւնն էլ դեռ քիչ է:

Գործակատարն աղքատ կոյրին առատ վարձատրեց ու գնաց իւր տիրոջ մօտ, հաղորդեց մաշկակարից ու կոյրից լսածները.—Այժմ, տէր, քու հերթն է, երեք ոսկու պատմութիւնն արա: Գիտես, որ ճանապարհորդ եմ, գնալու եմ հայրենիք:

—Շատ բարի, նստիր, ես քեզ պատմեմ քու ցանկացածը: Թ. քաղաքում ապրում էր մի իշխան, ունէր մի հատիկ աղջիկ. զարմանալի աղջիկ էր, որովհետև բացի գեղեցիկ լինելը, տղամարդի պէս էլ ուժով էր: Իշխանն իւր թագին ժառանգ էր սպասում, իշխանուհուն ասեց. «արի մեր աղջկան տղի շոր հագցրած պահենք, մինչև Աստուած մեզ մի տղայ տայ»: Իրանից ետ տարին տարու վրայ անց կացաւ ու իշխանին տղայ չը ծնուեց: Աղջիկը մնաց տղի հագուստում: Ձի նստել, սուր բանացնել շատ էր սիրում. մենակ ճանապարհ գնալիս աւազակների հետ կռուի էր բռնըւում, ոչ ով կարծիք չէր անում, թէ գիմացիներն աղջիկ է: Շատ երևելի մարդիկ իշխանի պալատ եկած միջոցին հաւանում էին նրան—այսինքն կեղծ իշխանապին ու ցանկանում էին, որ իրանց փեսայ դարձնեն: Իշխանագն իրան շատ պարզ ու հասարակ էր պահում ամենի հետ: Կուրծքը կոճկած ունէր և գլխին քոլոզի ձևով մախմուրէ

բան: Ամեն Աստծու օր իւր բնակարանից իջնում էր գոմը հետևելու, թէ ձիաներին ինչպէս են մաքրում կամ կերակրում: Ձիապանը խաբշիկ էր, անչափ հաւանում էր իւր տիրոջ, ամեն օր սրաատրոփ սպասում էր նրա գալուն, որ գովասանք լսի կամ ընծայ ստանայ: Բայց յանկարծ մի օր էլ երբ իշխանագին շատ մօտ էր կանգնած, սկսեց ամբողջ մարմնով սարսըռալ ու վերջը փռըշտալ: Իշխանագը ուշ չգարծրեց, իսկ խորամանկ խաբշիկը հետևացրեց թէ իշխանագի մէջ մի առանձին զօրութիւն կայ, որ իրան գող է պատճառում: Եւ մտածեց, չլինի՞ թէ սա աղջիկ է: Այն օրից խաբշիկի աչքը կպաւ իշխանագին, թունդ կպաւ, գիշեր ու ցերեկ այրւում սոչորւում էր, բայց չէր համարձակւում մտքինը լոյս աշխարհ բերել: Սովորականի պէս իշխանագը ամեն մի օր հանգիստ գալիս էր ձիաներին այցելելու ու վերադառնում, առանց նկատելու, որ ձիապանի սիրտը իւր համար քամ էր գնում:

Տէրը չգիտէր թէ իւր ծառան ինչ փշացած վարքի տէր է և դուրսը ո՞ւմ հետ յարաբերութիւններ ունէր: Մի օր սովորութեան համեմատ գնացել էր գոմը ձիաներին ակը տալու, ձաշն տուեց խափշիկին, մարդ չկար: Միամիտ մտաւ արողատունը ու նկատեց մէկին քնած. կարծելով թէ ձիապանն է, մօտեցաւ, որ վարթեցնի ու նկատողութիւն անի: Երեսից տեսնելով որ օ-

տար մարդ է, առանց խօսք ասելու շուռ եկաւ, իւր օթևանը բարձրացաւ:

Օրը բացուելուց ետ իջաւ ներքև ու ձիապանին յանդիմանեց.— քանի որ հետդ քաղցր են վարւում, դու ծառայութեան մէջ ծուլանում ես: Ինչո՞ւ ես գոմն անտէր թողնում ու գիշերները թափառելու գնում: Որպէս զի արարմունքդ հեռու չբտանես, այսօր ևեթ հօրս յայտնելու եմ:

Ձիապանը դեռ լեմածից չէր ուշիարացել. յանդուգն դիրք ընդունելով կոպտաբար պատասխանեց.

— Դեռ դու առաջքու մեծ յանցանքը քաւիր, յետոյ իմ չնչին յանցանքը երեսիս բռնիր: Վաղ առաւօտ եկել ես գոմը, ինչո՞ւ զայրոյթդ թափել ես հիւրիս վրայ, ի՞նչ էր նրա մեղքը:

— Ոչ ոքի վրայ զայրոյթ չեմ թափել, ես այն եմ ասում, ինչո՞ւ գոմը թանկագին ձիաներով լիք անտէր թողում ես մի օտարականի յուսով ու ինքդ թափառում:

— Հէնց այդ օտարականի համար եմ հարցնում, ի՞նչ մեղք ունէր, որ սպանում էիր:

Այս ասելով ծածկոցը վրայից հեռացրեց: Տէրն ալլայլուելով առաջ գնաց, տեսաւ օտարականին արիւնի մէջ թաթախուած:

— Այս արարքը վայել է իշխանագն որմինին, խօսեց խորամանկ խափշիկը, արժանի չէ՞ որ գնամ հօրդ ասեմ:

Սպանալիքը բանի տեղ չգնելով տէրն ասեց:

—Չեմ ուրանում, որ այդ օտարականին քր-  
նած տեսել եմ, սակայն մատով էլ չեմ դիպել,  
լինչ թէ սպանել:

—Ոչ, հաստատ դու ես սպանել, լրբաբար  
աղաղակեց սեամորթ ծառան:

—Սուտ ես խօսում, ձայնդ կտրիր, հրա-  
մայեց եշխանազը:

—Սուտ խօսողը իշխանագն է, որ աղջիկ  
ստեղծուած լինելով ողջ աշխարհին ուզում է  
խաբել, որ ինքը տղայ է:

Նկատելով, որ գաղտնիքը բացուած է, շփո-  
թութիւնից կարմրեց տէրը: Անպատկառ խափ-  
շիկն այդ դրութիւնից օգտուելով մարդասպան  
խօսքը մի քանի անգամ բերան բերեց: Տէրը  
տեսաւ, որ կեղան իւր վրայ քսուում է, լսողը  
կըհաւատայ ու իւր հօր անունին ամօթ կըբերի,  
ուզեց այդ անակնկալ փորձանքից մի կերպ ա-  
զատուի, մեղմ ձայնով ասեց:

—Քարշելի արարած, մի գոռալ, նպատա-  
կըդ փող պոկելն է, համբերիր, գնամ մի քսակ  
բերեմ: Տաւում եմ, որ այդ մարդը ազահու-  
թեանդ զոհ է դառել: Եթէ ուզելիքդ փողն էր,  
առանց անմեղ արիւն թափելու էլ կարող էիր  
ստանալ:

—Չէ, ես ոչ փողի կարօտ եմ, և ոչ էլ  
սպանող, գոռաց խափշիկը, սպանողն իս-  
կապէս դու ես. զարմանալի էլ չէ, եթէ այս  
հասակն հասնելով միշտ հաւատացրել ես աշ-

խարհին, որ տղայ ես, էլ ուրիշ ի՞նչ յանցանքի  
ընդունակ չես լինիլ: Դէ, ապացուցիր, որ աղ-  
ջիկ չես, ես կըհաւատամ, որ այդ մարդը քու  
սպանած չի:

Տէրը տեսաւ, որ անպատկառութիւնը հեռու  
է տանում, ասեց:

—Ի սէր Աստծու մի գոռալ, մէկով բաւա-  
կան չես, 10 քսակ ոսկի կըտամ, ստացիր, թող  
ձիապանի պաշտօնը ու գնա ապահով ապրիր:

—Ես ոչ քու խնդիրն ընդունողն եմ և ոչ քեզ  
հնազանդողը. թէկուզ հարիւր քսակ ոսկի խոս-  
տանաս:

—Հապա ասելիքդ ի՞նչ է, եթէ քու նպա-  
տակը փող պոկելը չի: Քու ի՞նչ գործն է, թէ  
ես աղջիկ եմ ու տղամարդի հազուստով եմ ման  
գալիս:

Սարգսի խափշիկն սպառնալիքին աւելի  
վտանգաւոր գոյն տալու համար աւելացրեց.—  
հօրդ ասելու եմ, որ դուստրդ անառակ մարդ-  
կանց հետ շարունակ բարեկամութիւն է անում  
ու վերջը սպանում, որ իւր կեղտոտ արարքը  
չը բացուի:

Այս հրէշաւոր մեղադրանքի վրայ իշխանա-  
նազի սարսափն եկաւ.

—Այդ չարութիւնը մտքիցդ հանիր, ասեց  
նրան, ինչ ուզում ես, կը տամ: Սաս համար-  
ձակ, հէնց իմացիր ես քու տէրը չեմ, այլ հա-  
ւասար մարդ:

Նրա մեծահոգութիւնից խափշիկն անամօթ կտրուեց ու հեռուեալն ասեց.

—Հօրդ սպասուորների մէջ միայն ես եմ, որ աղջիկ լինելդ գիտեմ: Եթէ ուզում ես, որ լռեմ, հիւրիս սպանութիւնը ծածկեմ, պէտք է խոստանաս, որ դառնալու ես իմ նշանածը:

Այդ յանդուգն առաջարկը իշխանագի զբզուանքը բերեց: Չարմանալի էր թէ ինչպէս իսկոյն չսպանեց: Առանց աղմուկի նրա ձեռից պրծնելու համար ասեց. «Երեք օր ժամանակ տուր»: Կիրք խափշիկը չուզեցնալով որսը ճանկից հեշտ թողնել, ասեց.

—Կը խաբես, չեմ հաւատում, գրաւ տուր, որ երեք օր սպասեմ. թէ չէ երեք ժամ էլ միջոց չեմ տալ:

Տէրը ձեռն ակամայ ծոցը տարաւ ու հանեց մի թաշկինակ.—ահա քեզ գրաւ, միայն Աստծու առաջ խոստացիր, որ ուրիշ ոք մինի չես ցոյց տալ: Այս փորձանքի մասին մէկ ես եմ իմանալու, մէկ դու: Եթէ պայմանը խախտես, կը տուժես:

—Այդպէս լինի, ասեց խափշիկը և ուրախագէտ գրեց թաշկինակն իւր ծոցը:

Իշխանագը քաշուեց իւր սենեակն ու մտածում էր, թէ ինչպէս վարուի խարդախ ձիապանի հետ, որ հարբած գրութեան մէջ իւր հիւրին սպանել է և նրանով է դնում: Երկու օրից ետ իշխանագը պարտէզ իջաւ, որ զբօսնելով սիրտը թեթևացնի, տեսաւ լիրբ ձիապանին այնտեղ

հետն էլ երկու պալատականներ, վէճի են բռնուել: Դրանք յայտնի էին իրանց ապականուած կեանքով և ատելի էին իշխանագին. նրան տեսնելով մօտեցան, հարցրին.

— Իշխանագ տէր, ճիշտ է, որ դու խափշիկին ոսկեկար թաշկինակ ես տուել:

— Ոչ, պատասխանեց իշխանագը կարմրելով ու ձիապանին նայելով:

— Էլ ծածկելն աւելորդ է, ասին պալատականները հեգնանքով, սա բոլորը մեզ պատմել է, դու աղջիկ ես եղել, մենք անտեղեակ և արդէն փեսացուդ որոշել ես ու նշանն էլ տուել, շնորհաւորում ենք:

Այս խօսքերը նետի պէս ցցուեցին իշխանագի սրտի ու թոքերի մէջ: Մտածեց շուտով այդ ողորմելիներից տղատուել, որ սրա նրա մօտ խօսելով լուռ ուխտ չըշինեն ու անունը կտորեն: Ասած է՝ պղինձը վէր ընկաւ, չկտորուեց, բայց ձախը վեր եղաւ: Ծնողներին ինչո՞վ կարող էր հաւատացնել, որ ամենը սուտ լուրեր են: Նրանց դառնալով ասեց.— դատարկ շնորհաւորելը քիչ է, ծառերի թանձր տեղը գնացէք, ոչ ոք չտեսնի. հրամայեմ սեղան բերեն, վայելենք:

Նստացրեց երեք հոգուն, ինքն էլ նստեց դէմները՝ թունդ խմիչքներ առաջները դրեց. ամենն էլ հաւասար խմելու էին, ինքը իրաւունք ունէր իբրև աղջիկ երեսը շուռ տուած խմելու: Կերուխումի

կէսում նրանք հարբեցին. ինքը մնաց լուրջ, որովհետեւ երեսը շուռ տալով խմելու փոխարէն գինին զգուշ ածում էր այն պարկի մէջ, որ այդ հագուստի տակ կրծքի վրայ կախած ունէր: Գինովցածները հեռոցհեռէ իրանց գաղտնիքները բաց արին. սկսան իրար հետ վէճի բռնուել նրա պատճառով: Իւրաքանչիւրն ուզում էր նրան իւր նշանած ունենալ. մէկը նրան անուանում էր՝ բալասան ծաղիկ, միւսը՝ հոտով մանուշակ, երրորդը՝ կարմիր վարդ: Նամտածեց.— սրանց այս վիճակում թողեմ, գլխիս շատ անախորժութիւններ կըբերեն, մնում է կարմիրները կապել:

Իւրաքանչիւրին մի հարուած տուեց, գետնից կպան ու մնացին: Թաշկինակը հանեց խափշիկի ծոցից ու դիակները թափեց պարտէզի տակով հոսող սրնթաց գիժ գետը:

Նայրը մինչև այդ ժամանակ անպարկեշտ բան չէր տեսել նրանից, եթէ սպասաւորներից լսէր, թէ իւր հատիկ զաւակը գլուխը տուել է գուարձութեան ողորմելի մարդկանց հետ ու վերջը նրանց սպանտաել, ի՞նչ կասէր: Սուտ խօսելու ընդունակ չէր, մնում էր թողնել առ ժամանակ հայրական տունը ու հեռանալ, մինչև բոլորը մոռացութեան արուեն: Առանց ծնողներին իմաց տալու, սակով լիք խուրջինը կապեց ձիու գաւակին ու դուրս եկաւ պալատից: Տեսնողները կարծում էին թէ զբոսանքի է գնում:

Կեղծ բեղ ու միրուք կպցնելով դէմքին հասաւ այս բաղաբը. խանութ բաց արեց, որ առևտրով զբաղուի, անցեալը մոռանայ: Իւր կուսութեան պատիւն անաղարտ պահելու համար երեք մարդ էր սպանել: Այդ ակամայ չանցանքը նրան տանջում էր: Որոշեց ողորմութեան միջոցով խղճի հանգստութիւն գտնել, ուստի օրական երեք ոսկի բաժանում էր աղքատներին: Սրտանց փնտուում էր մի երիտասարդ, որ հետը ծանօթութիւն կապի: Ինքն իրան ասում էր.— արդեօք կըգտնեմ մի երիտասարդ, որ գանձի ու զեղեցկութեան մօտ տարիներով մնայ ու չըզայթակղուի: Աստծու մատը ցոյց տուեց այդ մարդուն, երբ քեզ բերեց նրա մօտ: Իբրև գործակատար կացար ամիսներով, տարիներով, հետը ճաշեցիր, խելօք զրոյցներովդ նրան զբաղեցրիր, մի օթևանում պատկից քնեցիր. զեղեցիկ կազմուածքը, քնքոյշ դէմքը հազար անգամ մօտիկից դիտեցիր: Այս ամենը չկարացին բու միտքը պղտորել: Նա մնացել էր բու համեստութեան վրայ գարմացած, շատ անգամ ուզում էր իմանալ թէ ի՞նչ մայր է քեզ գաստիարակել, որ դու այդպէս առողջ բնաւորութեան ու կամքի տէր ես: Շատ անգամ բու անշահասիրութիւնը փորձելու համար խանութը դիտամար թողում էր ու դէս դէն գնում, գալիս էր տեսնում անարատ: Անշափ դուր էին գալիս նրան բու շարժուածքը, խելքը, արարմունքը, չէր վստահանում զգացածը

լոյս գցի: Գէմքով ու հասակով քեզանից մատաղ էր, չզիտէր ինչ եղանակ բռնի հետզ վարուելու, որ իմանալիր թէ բեզնից անհուն գոհ է: Շատ անգամ աջողակ գործ կատարած ժամանակից ցանկանում էր մօտը կանչել, ճակատից համբուրել, երկիւղ էր կրում կանացի թուլութիւնից. չլինի թէ վաղաժամ բանալ սրտի զգացմունքը ու ապագան խորտակի: Բաւականանում էր միայն երեսիդ ուրախ ժպտալով ու քաղցր խօսքեր ասելով: Նա անչափ տխրեց, երբ եօթ տարի մօտն ապրելուց ետ առանց կեանքի գաղտնիքն իմանալու վճռեցիր հայրենի տուն գնալ: Ինչքան այն ժամանակ վշտաբեկ էր, այնքան այժմ ուրախ է, որ վերագառնալով առիթ տուիւր երեք ոսկու պատմութիւնն անելու: Ուրեմն իմացիր, այսքան տարի քու տէրն ու ճաշակիցը եղել է իշխանի դուստր, տղամարդի հագուստով: Այժմ նա քեզ ցոյց կըտայ, որ ասածը ճիշտ է: Փոքր ինչ համբերիր:

Այս ասելով հեռացաւ իւր ննջարանը. երկար չքաշեց, այնտեղից դուրս եկաւ մի չքնաղ գեղեցիկուհի, կուրծքն ու ծամերն իրանց կապերից ազատուած, ծածան ծածան էին գալիս ու երիտասարդ գործակատարի ուշքը յափշտակում:

— Տէր Աստուած, այս ինչ հրաշք է, գոչեց նա ու ցնծութիւնից լաց եղաւ:

— Շատերն են ինձ ողորմութիւն բաժանելիս տեսել, սիրելիս, բայց ոչ ինի մտքով չի

անցել դրա խորհուրդը հարցնել: Միայն դու էիր, որ հետաքրքրուեցիր և միայն դու ես, որ իբրև հաւատարիմ, պարկեշտ անձ ինձ դուր եկար: Երեք ոսկու պատմութեան հետ յայնուամ էմ քեզ և իմ գաղտնի սէրը, որ եօթ տարի թագցրած կրծքիս տակ պահել էմ: Ահա իմ կարողութիւնը, ահա իմ անձը. նրանց տիրանալը քու կամքից է կախուած: Մինչև օրս ես էի քու տէրն ու հրամայողը, այժմ հերթը քեզ էմ տալիս:

Ձմալած գործակատարը վեր թռաւ ու գեղեցիկուհու աջը համբուրելով ասեց.

— Ես սրտի անհուն բերկրանքով ընդունում էմ քու առաջարկը, մինչև օրս եղել ես իմ տէրը, այսուհետև կլինես իմ սրտի տիրուհին:

Ձորիների թիւը եռապատկեցին, խանութի բոլոր ապրանքը հակներ կապելով քարուանի վրայ բարձած ճամբու դրին: Գեղեցիկուհին կըրկին տղամարդի շոր հագաւ ճանապարհին վտանգներից ազատ մնալու համար: Երկսով ընտիր ձիան նստած հետևեցին քարուանին ու հասան տղի հայրենիքը: Տղէն հայ էր, աղջիկը տաճիկ, տղի սիրուց հայացաւ: Պսակուեցին ու բաղտաւորուած ապրեցին:



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ	
20	հերքե	12	ցաւալով	դառնալով
23	վերև	7	թագել	թագել
25	հ.	13	հաւիք	հանիք
31	վ.	1	խղճի	խղճի
—	հ.	14	դիշեր	զիշեր
41	վ.	7	իւր	իւր
33	վ.	12	տեսել	տեսնիլ
—	—	13	մակղուզին	մարդ ու կին
44	վ.	13	վեր	վեր
54	հ.	6	դող	շող
46	վ.	3	փող	փոխ
47	վ.	2	զաւակներդ	զաւակներդ



ՀՀ Ազգային գրադարան



NL0369938

Առանձին գրքույկներով լոյս տես  
տուրքիւններս

1. Աստուած չրնանաչոյ	10 կող.
2. Անձեռ. աշխարհ	8 »
3. Աստուած աղքատի կերպուծ	20 »
4. Գալս ափօ, Խաչան բ. տպ.	12 »
5. Երկու աղբերացեղ բ. տպ.	30 »
6. Փամանաչր ոսկի. պատկերադարդ	40 »
7. Խուլ Խաչիկ բ. տպ.	25 »
8. Ծովինար բ. տպ.	20 »
9. Հէքիաթներ	30 »
10. Շէն թագաւորի աղջիկ բ. տպ.	25 »
11. Քաջ Աղասի	25 »
12. Սասունցի Յովնան	30 »
13. Երկասիրութիւններ ա. զիրք	50 »
14. «Սիրտ» զրքից 9 պատմ. պատկերադարդ	40 »
15. Աղգային առակներ Արդ. Յովհ.-ի պատկ.	25 »
16. Երկու գրոյց. պատկերով	25 »

Հարցնել Թիֆլիսի գրավաճառներին

Մեծ գումարով ցանկացողները դիմելու են իրան  
Քամալեանց Ս.-ին՝ Ներսիսեան դպրանոց.

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊԷԿ